



ՄԱՍԻՍ

ԿԻՍԱՄԱՆԱՅ  ԳԱՆՂԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ—ԽՄԻՍ.ԳՐԱԳԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆ ՃԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանանդյար Եօզուշու, Կ. Պոլիս

ԳԻՁ ՄԸ ԿՈՐՈՎ . ԳԻՁ ՄԸ ՄՏԱԾՈՒՄ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ՀԻՒԱՆԴ ԳՐԻՁԸ
ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Նարկիլէն . — Լուսնալու դէմ
ԳՐԻԳՈՐ ԶՕՂՐԱՊ
ՅԻՇԱՏԱԿՆԵՐ
Սաւօթն ու Իսրայէլ
ՅԱՅԳԵՐԳ
Յ. Գ. Մ.
ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ

ՎԵՐՋԱԼՈՅՍԷՆ ԵՏՔԸ (Նորալէպ)
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ
ԽՁՈՒԱԾ ԼԱՐԵՐ , ԹՐԹՈՒՈՒՆ ԹԵԼԵՐ
Տարբալուծում . — Վերջալոյսի պահուն
ԿԱՐՕ
ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ
Դաւառացի գրագէտը
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ (Թատրերգութիւն)
ՀԷՆՐԻԲ ԻՊԱԷՆ
ԾՈՎԻ ԲԱՂՆԻԲ
ՏՕՔԹ. ԴԱԻԹԵԱՆ

Յառաջիկայ թիւով պիտի հրատարակուի Հէնրիէ ԻՊԱՆԷՆ ի վրայ
ուսումնասիրութիւն մը :

« Մասիս » ի պատասխանները

ԱՅՆԹԱՊ . Գ. Թ. — Ստացանք Ձեր 18/30 մայիս թուակիրը , երկու նոր բա-
ժանորդներուն թերթերը կը ղրկենք թիւ 1էն սկսելով . Բ. թիւ կ'իջե՛ծ ծախող ըլլայ
պիտի գնենք , լայց չիկայ : Ներկայ թուով կը լրանայ մեր առաջին վեցամսեակը ,
ուստի թողոր բաժանորդներուն տարեկան բաժնեգլխները հաճեցէք մեզ շուսով հաս-
ցընել :

ԽԱՐԲԵՐԴ.—ՔԷՍՐԻԿ , Ա. Գ.— Կ'ըսպասենք բաժանորդներու անուններուն ,
բաժանորդագլխները կրնաք յանձնել մեր Խարբերդի թղթակից Ռուբէն ԷՖ. Զար-
դարեանի :

ԴԱԽՐԷԺ . Թղթակից . — Ստացանք երկու օրինակի բաժանորդագլխները , կը
սպասենք Ձեր շահագրգիռ գիտական յօդուածներուն :

ԵՐԶՆԿԱ . Ա. Ա. — Կը հաստատենք 20 մայիս թուականով Ձեզ ղրկուած նա-
մակը :

ՊԱՅՐԱ . Ա. Բ. — Սամոնէն ետ եկաւ Ձեր ընկալագիրը . 12րդ թիւէն Պաֆ-
րա կը ղրկենք թերթերը . հաճեցէք իսկոյն ղրկել Ա. եւ Բ. վեցամսեակի բաժնեգլխը :

ՀԱԼԷՊ . Ա. Մ. — Թերթերը կանոնաւոր կը ղրկուին Ձեզ , Բաժանորդագլխը
չենք գանձած : Կը խնդրենք որ անյապաղ ուղղակի մեր հասցէին ղրկէք :

ՀԱԼԷՊ . Ի. Խ. — Ստացանք Ձեր ղրկած զրամը . թերթերը ղրկուած են
արդէն Ա. թիւէն .

ԵՐԶՆԿԱ . Զ. Տ. — Ձեզ ղրկուած է Ա. թիւէն . հարցուցէք այդ տեղի թղթատունը :

« Մասիս » ի նախորդ թիւերը ձեռքէ կը ծախուին Մատթէոսեան
թղթալաճառատունը . Ֆինճանճըլար-Եօդուշու , թիւ 27 : Նոյն վաճառա-
տան մէջ կը գտնուի նաեւ նորագոյն թիւը : « Մասիս » ի առաջին վեցամ-
սեակը ներկայ թիւով կ'աւարտի եւ 12 թիւերը միասին կը կազմեն 392
կրկնատիւնակ էջերէ բաղկացած հատոր մը որ ձեռքէ պիտի ծախուի 25
դրշ . ի , իսկ թղթատարի ծախքով 30 դրշ . պիտի արժէ :

ՄԱՍԻՍ

ԿԻՍԱՄԱՐԱՆՅ  ԳԱՆՂԷՍ

48^{րդ} ՏԱՐԻ

— 5 ՅՈՒՆԻՍ 1899 —


ԹԻԻ 12

Ը Ն Թ Ե Ր Գ Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Կիսամսեայ Մասիս ներկայ թիւով կը լրացնէ իր առաջին վեցամսեակը : Այս առթիւ խմբագրութիւնս կը փութայ յայտնել թէ « Մասիս » պիտի յարատեւէ միևնոյն ծրագրով , նորանոր յաջողութիւններու եւ նորանոր աշխատակիցներու շնորհիւ թերթը միշտ աւելի բարգաւաճեցնելով :

Բացուած է բաժանորդագրութիւն « Մասիս » ի երկրորդ վեցամսեակի համար : Բաժանորդագրութեան պայմանները կարդալ թերթիս կողքին երրորդ երեսին վրայ : Կիսամսեայ « Մասիս » ի վարչութիւնը որոշած է 13րդ թիւէն, միայն կանխիկ վճարած բաժանորդներու թերթ ղրկել : Ուստի կը խնդրուի մեր այն գործակալներէն և բաժանորդներէն , որոնք տակաւին Ա. վեցամսեակի հաշիւներն ալ չեն կարգադրած , որ իրենց յետեալ պարտքը վճարեն , երկրորդ վեցամսեակի բաժանորդագիւններն ալ միասին ղրկելով : Կը ծանուցանենք նաև մեր բոլոր գործակալներուն , որ փութան երկրորդ վեցամսեակի բաժանորդագիւնները մեզ անյապաղ հասցնել , ասով նիւթապէս չի փռասելու համար մեր ձեռնարկին , որ այնքան գնահատուած է արդէն ամէն կողմէ :

Խմբագրութիւնը



ՔԻՉ ՄԸ ԿՈՐՈՎ, ՔԻՉ ՄԸ ՄՏԱԾՈՒՄ

ՄԻՒԱՅԻՆ, ՇԱՄՏԱՆՃԵԱՆ



ԱՒԵՐՈՒ ատեն ա-
մէնէն աւելի պէտք
է հոգեկան առու-
գութիւն մը, չընկճուելու համար: Տըլս-
րութիւնը, ցաւած հոգիները, արդիւնք
աւշային խառնուածքի մը, այնքան ընդ-
հանրացած են մեր միջավայրին մէջ, որ
տեսակ մը վատոյժ յոռետեսութիւն մեր
ամէնէն աւելի տիրող աշխարհահայե-
ցողութիւնը սկսած է դառնալ:

Հասարակութեան մը աշխարհահա-
յեցողութիւնը, մանաւանդ ժողովրդա-
կանացած ձևի մը տակ, կը յայտնուի
գեղարուեստներուն միջոցաւ: Ընդհա-
նուր գեղարուեստական կեանք մը չու-
նինք մենք, միայն սահմանափակ գրա-
կանութիւն մը ընելով: Ու այդ գրա-
կանութեան նկարագրին ամէնէն խոշոր
գիծն է բանաստեղծութիւնը: Բանաս-
տեղծութիւն մը սակայն որ տարւոյն
չորս եղանակներուն բահաւանդին մէջ
կ'ամբիփուի, գարնան վերկենցաղումին
ու աշնան տերեւաթափին, ձմրան թըմ-
փիրին ու ամրան մեղկութեան ճակա-

տադրային յանկերգը մուտաւով: Արդէն
ամէնքս գիտենք թէ մեր գրական գոր-
ծունէութիւնը սահմանափակուած է մա-
մուլի մէջ, եւ մամուլի ներկայացուցիչ-
ներէն մանաւանդ անոնք, որոնք բա-
նաստեղծութիւններ կը հրատարակեն,
գիտեն թէ բանաստեղծներու ինչ
հաջողին երամ մը ունինք, որոնք ի-
րենց անգոյն արտագրութիւններովը քիչ
օրերու մէջ կը լեցնեն խմբագրատան
կողովները: Մանաւանդ գարնան և աշնան
սկիզբները ա՛լ կը յորդի բանաստեղծա-
կան աւիւնը և մանաւանդ գաւառային
ամէն թղթաբեր բանաստեղծութիւննե-
րու ծրարներ կը բերէ խմբագրութիւն-
ներու համար: Ծրարներ, որոնք իրենց
բովանդակածին պէս կը մնան մութին
մէջ, միշտ լոյսին երազելով որ չի ծա-
գիր իրենց վրայ:

Լուրջ ուսումնասիրութիւն մը մու-
թին մէջ մնացած այդ բոլոր քերթուած-
ներուն, որոնք հետևութիւններ հանել
տալու աստիճան բազմաթիւ են, ցոյց
կուտան մեզ զգալու մեղկ, հեշտ եղանակ
մը, և իրերն ու երևոյթները դատելու
լրակութիւն մը: Ու այն յամառութիւնը,
որ զգալու և դատելու նոյն եղանակը

պահելուն մէջ կ'երևայ, կը նկատեմ ես հիւանդութիւն մը, որուն հակազդակները գտնելու խնդիրը պէտք է մեզ լուրջ կերպով զբաղեցնէ: Մանաւանդ ըսինք վերջապէս թէ մտաւոր եւ հոգեկան անարիւնութենէ յառաջ եկած այդ հիւանդութիւնը տարածուած է քիչ մը մեր ամբողջ հասարակութեան մէջ, որուն արդիւնք՝ կը կազան այսօր մեր հանրային հաստատութիւնները, քանի որ զայն վարող մարդիկներուն քով կը պակսի ընդհանրապէս ձեռնէրեց կորով և գիտակից գաղափար մը նոյն գործի մասին: Ըսի արդէն թէ գրականութիւնը ժողովրդականացած ձև մըն է, որով կ'արտայայտուի ամբողջ հասարակութեան մը աշխարհահայեցողութիւնը: Իսկ երբ այդ աշխարհահայեցողութիւնը, իբր ցոլացումը նոյն հասարակութեան զգալու և դատելու չափին, բաւական չի նկատուիր ընդհանուր զարգացման ճամբուն մէջ ապահով յառաջ երթալու համար, այն ժամանակ այդ գրականութեան մէջ պէտք է մտցնել նոր տարերքներ, որոնք կարող ըլլան փոխել ամբողջ հասարակութեան զգալու և դատելու եղանակը, իրեն աւելի առոյգ ու աւելի զարգացած աշխարհահայեցողութիւն մը տալով:

Կորովի ու առուգութեան, մտածելու ու դատողութեան տարերքներն են, որոնք պէտք է մտնեն մեր նկարագրին մէջ, և որոնք անոր ամէնէն աւելի շեշտուած գիծերը պէտք է ըլլան: Այդ գործը պիտի կատարուէր կրթութեան հիմնական նոր դրութեամբ մը, մեր նոր սերունդին համար և ինքնօգնութեան ոգևոլ պատրաստուած ընթերցանութեան ժողովրդային գիրքերով:

Դպրոցները և ընթերցանութեան

գրքերն են, որոնք հասարակութեան մը մէջ, զգալու և դատելու եղանակ մը, աշխարհահայեցողութիւն մը կը ներարկեն, ու նորէն նոյն դպրոցներն ու նոյն գրքերն են որոնք զգալու և դատելու այդ եղանակը կը փոխեն:

* * *


Կրթական գործի բարենորոգման մասին շատ խօսուած է, նոյն խօսքն էլ երբեք մէջ ալ, և միշտ միեւնոյն բաները կարելի է կրկնել, ա՛յնքան յարատեղով փճակ մը ունին կրթական ներկայ դժբաղդ պայմանները: Ես համոզուած եմ որ ընդհանուր կրթական բարենորոգումէ մը շատ աւելի պիտի արժէր, եթէ իրազէկ մէկը անհատական ձեռներէցութեամբ հիմնէր տիպար նախակրթարան մը և տիպար ուսումնարան մը: Մեր կրթական աստիճանը եւ մեր պայմանները ունեցող հասարակութիւններու մէջ խօսքէ աւելի օրինակներն են որոնք կը գործեն, կը ներգործեն: Կրթութիւնը բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ, այն չթերացող միջոցն է, որով նոր սերունդը կը պատրաստուի ուղղածին պէս: Դպրոցներէ ելող մեր նոր սերունդը չա՛տ վատոյժ, չա՛փազանց դալկադէմ և խղճալի կերպով շուարած է. կորովը կը պակսի իր ամբողջ էութեան մէջ և իրական աշխարհն ալ չէ ճանչցած, որպէս զի անոր մասին դատողութեան վրայ հիմնուած առողջ մտածումներ ունենայ: Գրականութեան մէջ մտնող նոր սերունդն ալ նոյն սըլխուր փճակը կը ներկայացնէ այսօր: Դալկադէմ, վատոյժ արտագրութիւններ են ընդհանրապէս, որոնք կ'ընտրուի իրենց տակ կ'արտայայտուին, ցոյց տալով կենսականութեան պակասը իրենց մէջ:

Պէտք է նոր միջոցներ խորհիլ, հիմակուանէն տարբեր գրական նոր սերունդ մը արտադրելու համար: Մեր այսօրուան գրական հրապարակը, մէկերկու բացառութիւններէ զատ, կը պարտինք մեր նախորդ սերունդին, որ բաւական զարգացած գեղադիտութիւն մը տուած է մեզ: Այսօր, նոր սերունդն ալ պէտք է դարձնէ իրը, որպէս զի իրմէ վերջը եկողներուն կարող ըլլայ ինքնուրոյն բան մը ժառանգ ձգել: Շատ սովորական դարձած է այն բաղդատութիւնը թէ գեղադիտական տեսակէտէն ծածկահայերու գրականութիւնը լաւագոյնն է, իսկ գաղափարի տեսակէտէն Ռուսահայերունը ամէնէն առաջ է: Ինչո՞ւ այդ բաղդատութիւնը ճշմարտութիւն մնայ նոր սերունդին համար ալ: Ինչո՞ւ նոր սերունդը, զարգացման տեսակէտէն, առանց գործունէութեան դադար մը ըլլայ նախորդ եւ ապագայ սերունդներուն միջեւ: Մեր գրական նոր սերունդը պէտք է գաղափարային հասունութիւն մը եւ ոգւոյն մէջ առուգութիւն մը իւրացնէ: Շատ առողջ հասարակութիւն մը չենք արգէն եւ պզտիկ հիւանդութիւնները մեծ ֆլամներ կրնան պատճառել մեզ: Հիւանդ հակումները պէտք է ջնջենք մեր գրականութեան մէջէն, որուն պատճառները մեր յարգելի ախտատկիցը, Պրն. Պօղոս Բօլօբեան յաջող կերպով ցոյց կուտայ իր այսօրուան «Հիւանդ գրիչը» վերնագրով յօդուածին մէջ: Ու որպէս զի նախ գրական սերունդ մը կարելի ըլլայ սատարել, ա-

ւելի՛ կեանքով լեցուած ու աւելի՛ մտածումներով տոգորուած, պէտք չէ միայն մեր մամուլը ներկայէն աւելի բարձր դիրքի մը մէջ տեսնելու երազներով օրօրուինք, այլ նաեւ անհատական ձեռնէրէցութիւնը ունենանք մեր պայմաններուն համար տիպար գրական դպրոց մը ստեղծելու միջոցները գործադրելով: Հագեկան կորովը՝ և առողջ մտածումը՝ զարգացման մը արդիւնքն է: Դրպիւրոցներով կրնանք հասարակութեան մը մէկ մասը, և որոշ չափով միայն զարգացնել, իսկ ժողովրդական օգտակար գրքերու հրատարակութեամբ մանաւանդ կրնանք մեծ հրաշքներ գործել: Միայն պէտք է քանի մը հոգիներ անհատական նախաձեռնութիւնը սննդան հրատարակչական ընկերութիւն մը կազմելու, ընթերցող հասարակութեան բոլոր դասակարգերուն համար ընթերցանութեան տոկուն գրքեր պատրաստելու օգտակար նպատակով: Ռուսահայերը մենէ աւելի գաղափարային բարձրութիւն մը ունեցած են, որովհետեւ գիտցած են գաղափարը տաժողները յարգել, և ունին այսօր հրատարակչական ընկերութիւն մը, որ հեղինակներն ու թարգմանիչները վարձատրելով նախապէս, կը հրատարակէ անոնց երկերը:

Քիչ մը կորով և քիչ մըն ալ առողջ մտածում, պիտի համոզէր մեզ թէ անհատական ձեռնէրէցութեամբ կրնանք մեծ օգտակարութիւններ ունենալ մեր հասարակութեան համար, մեր կորովէն ու առողջ մտածումէն փոխանցելով հասարակութեան բոլոր խաւերուն մէջ ալ:

ՀԻՒԱՆԴ ԳՐԻՉԸ



ՊՕՂԱՍ ԳՕԼՕԼԵԱՆ



ԻՇԵՐՈՒԱՆ մութին սոսկումներուն մէջ տքնող մարդուն աչքերուն երեւցած ար-

հաւիրքներուն բանդագուշանք (hallucination) կ'ըսենք՝ կը խորհէի անցեալ օր, երբ Արեւելքի մէջ կարգացի Պ. Անտոնեանի վախճան պատմութիւնը : Նկարագրութիւնն էր հրաշալի ու հարուստ, հիւանդ ուղեղի մը, ուրուն ես գիտիով այլասերած ուղեղ պիտի ըսեմ, գիշերուան սեւերուն մէջ ունեցած բանդագուշանքէն : Կը խոստովանիմ թէ շատ քիչ անգամ այդքան ճոխ բանդագուշանքներու տէր հիւանդներու հանդիպած եմ : Ամէն բան շատ լաւ ըմբռնուած ու նկարագրուած էր : Խաւարին աղղեցութիւնը, առարկաներուն կեանք առնելը, շիշ մը ջուրին ծովի վերածուիլը, անարկու գազաններուն խուժանք, կրակը, բոցերը . կատարեալ : Hallucinations nocturnes alcoolique. Երբ բժշկական անունը դոր կուտամ իր գծադր հերոսին արհաւիրք զառանցանքներուն :

Իմ դիտողութիւնս հոս չէ : Գրական հաւակնութիւններ չունիմ խճճեղու համար այդ վախճան պատմութիւնը . ու գիտական տեսակետով՝ շատ լաւ պատրաստուած observation մը կը գտնեմ . ինչպէս կ'ըսեն, «հիւանդներու վրայ առնուած նօթեր» : Իմ դիտողութիւնս հոս չէ : Պիտի կարգայի, ժպտէի ու մոռնայի այդ պատմութիւնը եթէ իր տեսակին մէջ առանձին ըլլար ու չըլլար վերջերս ծնած հիւանդ գրականութեան մը արտագրութիւններէն նմոյշ մը :

Տխուր ու նուաղկոտ գրականութիւնը կը հասկնամ : Ամէն երկիրներու մէջ, ամէն

կլիմայի տակ ուրախներ կը ծնին, ախուրներ կ'ապրին . մարդկութիւնը իր տարբեր հոգիներով անդամները ունի աշխարհի վրայ : Հիւանդ Դուրեանի բանաստեղծութիւնը առողջ կը գտնեմ, ախուր, այո՛, հոգիով, զգացումով լեցուն, արցունքներով գրուած, բայց առողջ : Վէպէնի, հիւանդ ու նոյն իսկ գիտով Վէպէնի ոտանաւորները, գլուխ դործոցներ բանաստեղծութեան, ունին հոգիին սուգը, միաքին ցաւերը, բայց հիւանդ չեն :

«Վախճան պատմութիւնը» առիթը կուտար ինծի բացատրել թէ ինչ ըսել կուզեմ ու ինչ կը հասկնամ հիւանդ գրականութիւն անունով, որ օր օրի կ'աճի մեր մէջ, եւ թէ ինչո՞ւ կը բողբոքեմ անոր դէմ :

Մարմինդ փուշ փուշ ընող դէպքերով ու նկարագրութիւններով խճողուած պատմուածք մը, աներու ու վախերու պատմութիւններով համեմուած նորավէպ մը, դիակներով բեղմնաւորուած թատերախաղ մը հիւանդ գրականութիւն է ինծի համար : Հիւանդութեան նկարագրութիւններ ու գլխաւորաբար ջղային հիւանդութեանց ֆիզիոլոգիան ու մտաւոր երեւոյթները երկար բարակ պարզող ժողովրդային յօդուած մը, հիւանդ, չա՛տ հիւանդ գրականութիւն մըն է : Առօրեայ արկածներու, յանկարծ մեռնողներու, չարագործներու, մարդասպաններու պատմութիւնները ու ոճիրները օրուան թերթերուն մէջ նկարելը հիւանդ գրականութիւն է :

Հո՛ս, Բարիկ, ա՛լ չեն ներկայացներ գիշատիչ թռչուններով ու դիակներով հիւսուած թատերագրութիւնները, բայց կան տակաւին ոճրագործութիւնները իրենց մասնաճիւղը ընող օրաթերթեր, որոնք կ'ըսեն քեզի թէ աշխարհիս որ ծածուկ մէկ անկիւնը, պժգալի ու անսիրտ ոճրագործ մը ճերմակ պառաւ մը յօշոտած է կամ պզտիկ աղջիկ մը լլկած : Եւ ասոնք իրենց մասնաւոր յաճախորդները ու-

նին , Կան նմանապէս սարսափելի դէպքերով լեցուած թերթօններ հրատարակող լրագիրներ , ինչնր չեն պատմուիր անոնց մէջ : Անոնց ընթերցողներէն քանիննր յետոյ ոճրագործ չեն եղած :

Ու կը տեսնեմ թէ հակում մը ունինք մենք ալ այս հիւանդ գրականութիւնը մշակելու : Բանդագուշանքները մեծ դեր կը խաղան . էն շատ սիրուած սեռը կ'երեւայ : Այլ երեւակայուած ու չերեւակայուելիք բաներ կը պատմեն մեզի մեր նորերը :

Կան նաեւ մեր մէջ բժիշկ քրոնիկագիրներ : Ասոնք ամէնէն վտանգաւորներն են : Վախցէք անոնցմէ : Գիտութեան շուքին տակ , բժշկութիւնը ժողովրդականացնելու աղնիւ նկատուածով , ամէնէն վտանգաւոր գրողներն են :

Կարգացի անցեալ տարի , Պոլսոյ թերթի մը մէջ , ժողովրդին ուղղուած յօդուածներ բժշկական , առողջապահական վերնագրով , ո՛ր ջղային բոլոր հիւանդութիւնները , իրենց մասնաւոր ու ամէնէն փոքրիկ երեւոյթներով նկարագրուած էին : Առողջապահական խրատներու սպասեցի , չեկան անոնք : Այս տխուր ազդեցութեան տակ էի , երբ հոս , այս սիւնակներուն մէջ կարգացի , բարեկամիս Տօքթոր Դաւիթեանի շատ նրբութեամբ , առանց վտանգաւոր նկարագրութեանց , ջղային կիներու առողջապահութեան վրայ գրած յօդուածները :

Պատասխան մըն էր կարծես ատիկա , դաս մը այն գիտուն քրոնիկագիրներուն , որոնք վախ ազդող խտանիչերով լեցնելով իրենց արծակը , հասկցնել կ'ուզեն կարծես թէ իրենք կը ճանչնան բոլոր այդ կնճռոտ հիւանդութիւնները :

Բժիշկը որ բարի նպատակը ունի իր ընթերցողներուն օգտակար ըլլալու , դրականապէս օգտակար , իր յօդուածներուն մէջ , ինչ նիւթի վրայ որ ալ գրէ , զգուշանալու է ջղայիններուն զգայնութիւնը արթնցնող նիւթերէ , միտքը ու երեւակայութիւնը տանջող պատկերներէ :

Մարդ , ոոյն իսկ առողջը , տրամադիր է միշտ ինքզինքը քիչ շատ մտիկ ընելու , իր ներքին զգացածներուն կարեւորութիւն տալու . ջղային կազմուածք ունեցողը ոչ միայն

հակամէտ է , այլ կը փնտռէ իր վրայ , իր մէջը անցած դարձածին պատճառը ու հոգեբանութիւնը : Այստաւորը հիւանդութեան առջի օրերէն գիրքերու , բժշկական գիրքերու մէջ կը փնտռէ իր ցաւին պատճառը ու դարմանը : Արդ բժիշկը որ ժողովրդային յօդուածով մը ջլախտաւորին հոգին տակն ու վրայ կ'ընէ , աւոր պատմելով հիւանդութիւններ , նկարագրելով ուրիշ ջլախտաւորներու հոգիին ինչ տխուր ու սեւ գոյներ ունենալը , էն գէշ ծառայութիւնը ձրի կատարած կ'ըլլայ , հակառակ մարդկութեան օգտակար ըլլալու ունտին , որովհետեւ իր ընթերցողներէն շատեր կ'իւրացնեն իրենց կարգացած նշանները :

Այս գէշ-առողջապահական յօդուածներուն արդիւնքը ըլլալ չեմ կարծեր մեր հայերուն հիւանդ գրականութիւնը : Մեր ջղային մեղաւաղձոտ տրամադրութիւնն է որուն արդիւնք ծնաւ ան , Փրանսական նոր գրականութեան ալ ազդեցութեան տակ : Ֆրանսացոց առողջ գրականութեան փոխանակ մեր ուղեղին բջիջներուն անունը առնելու , ծուռ , ու խոստովանինք , քիչ մըն ալ հիւանդ հակումով մը ինկանք ցաւագար գրականութեան մը վրայ , ու առանց ուսումնասիրելու միւսները , ընդունեցանք ինչ որ սարսափելի էր , ինչ որ վախերով կը լեցնէր մեր հոգին : Օգթավ Միուսօի , յոյժ տաղանդաւոր գրողին , յօդուածները անյագութեամբ կը կարգան մեր երիտասարդները , եւ սակայն իմ ճանչած հեղինակներուս ամէնէն հիւանդներէն , ամէնէն ցաւագարներէն է :

Զօլա ալ , ժամանակին այդ հիւանդ գրիչով գիրք մը գրած է , Թեռեզ Ռաֆէլը , ուր բանդագուշանքներու ահռելի պատկերները չեն խնայուած : Ֆրանսայի պէս գրական երկրի մը մէջ , մէկ քանի հիւանդ գրութիւններ մեծ ազդեցութիւն չեն կրնար ընել , լայց երբ կը տեսնեմ թէ մեր մէկ քանի գրողներուն մեծամասնութիւնը այդ հիւանդ ճամբան կը բռնէ , առանց առողջ գրականութեան հետեւելու , կը վախնամ որ իրենց հետ գարջքնեն , իրենց մութ մթնոլորտին տակ ընթերցողները . ու ասիկա մեծ դժբախտութիւն մը պիտի ըլլար : Ահա ինչո՞ւ համար կը բողբեմ :

Գրող մը անշուշտ իր տիրութեան վայր-
կեանները ունի , իր քիչ շատ տկար կողմերը ,
Հոգեկան մէկ մեղամաղձոտ վայրկեանին ծըն-
ցուցած արձակը կամ ոտանաւորը անպատ-
ճառ ժողովուրդին ներկայացնելու չէ : Կը
հասկնամ թէ անոնցմով գիրք մը լեցնէ :
Գիրքերը մասնաւորներ կը կարգան մեր մէջ .
քիչեր ուրեմն . իսկ օրաթերթը ամէն մարդ .
ու մեր դրականութիւնը , մտաւորական ամ-
բողջ գործունէութիւնը թերթերուն մէջ կը
կեդրոնացնենք :

Արդ , քանի որ մեր մէկ հատիկ գրա-
կանութիւնը տասը քսան փարանոց օրագրու-
թիւնն է , գէթ ան պէտք է առողջ ըլլայ :

Առողջ միտքը առողջ մարմնոյ մէջ կը
գտնուի ըսած են : Երբ՝ ողջ առողջ մարմնոյ
մը մէջ խորհող՝ ոչ նուազ առողջ միտք մը ,
բանդապուշտնքներու , զառանցանքներու վէ-
պերով անանի , յիմար յղացումներու , հիւանդ
արտադրութիւններու պաշարով իր ծարաւը
անցնէ , օր մը ինքն ալ , տարիներ յետոյ ,
կը ծռի : Այս տխուր ազդեցութիւնը շատ
զգալի է տղայոց վրայ , անոնց փափուկ ու-
ղեղը ամէն արտաքին գրգռութիւն անմիջա-
պէս կը պատկերացնէ իր խորշերուն մէջ ,
նորսելու ու արամբարանելու կարողութիւնը
չունի : Կ'ընդունի պարզապէս իրեն տրուած
հիւանդ գրականութիւնը : Ու ինք իր կար-
գին իր հիւանդ գրիչը կը տաչէ ու իր մոլոր-
եալ ու վիժած գրականութիւնը հրապարակ
կը նետէ :

Ձէ' , պէտք է որ մեր արդէն ջղային ցեղին
խնայենք այս սխալ գրականութիւնը : Մեզի
առողջ միտքեր առողջ արտադրութիւններ
պէտք են : Ձի բաւեր մարմնոյն առողջապա-

հութեամբ միայն զբաղիլ : Հոգին ալ պէտք է
խնամել , անո՛ր ալ տալ իր պահանջած ա-
ռողջապահութիւնը : Ու այս բանը կրնանք
ընել ընտրելով մեր ընթերցումները , մեր ու-
ղեղէն , երեւակայութենէն հեռացնելով սեւ
պատկերները , ու ջանալով որ մեր մտաւո-
րական արտադրութիւնները կատարեալ առող-
ջութեան նշանները ունենան , ընթերցողին
հոգիին մէջ դնեն անձնաւստահութիւնը , ինք
իր վրայ հաւատքը : Մեր գէշ ու ցաւազար
յղացումները պատռելու քաջութիւնը ունե-
նանք : Մեր զաւակները մեզի՛ կը նային . չի
տանք անոնց մեր հիւանդ գրականութեան
պատկերները : Անոնց ժառանգ չի ձգենք մեր
հոգիին տիրութիւնները :

Աղգերու այլասերումը մօտէն ուսումնա-
սիրած եմ . մարդուն մտաւորական ու բարոյ-
ական անկումը միայն հիւանդութիւններով ,
դժբախտութիւններով , ալքով չի պատահիր :
Քաղաքակրթութիւնն ալ , որքան որ ալ յոգ-
նեցնող , սպառող ու քայքայող ըլլայ չի
բաւեր այլասերելու մարդկութիւնը , եթէ գիտ-
նանք ֆիզիզական խնամքներուն հետ հոգին
ալ չմոռնալ : Ալքօլը , զրեցի , վնասակար է
մարդուն : Այլասերումի գլխաւոր պատճառ-
ներէն է : Հիւանդ գրականութիւնը որ գի-
տական տեսակէտով այլասերումի արդիւնքը
պէտք է ըլլար , կրնամ ըսել , իր շատ մեծ
զերը ունի մարդոց անկումին մէջ : Եթէ կու-
ղենք առողջ ծնունդներ ունենալ , կոտորենք
այդ հիւանդ գրիչը ու առողջ գրականութիւն
միայն տանք մեր ընթերցողներուն :

Եւ անա ինչո՞ւ համար բողբոջեցի :

Բարիդ , Յունիս , 99



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ

ՆԱՐԿԻԼԵՆ



ԲԱՆ ընդարձակ . պատուհաններ փակ ու գոց .
Գետինը գորգ ու բազմոց մը ցած ու լայն ,
Մերկ պատին վրայ շրջանակով ոսկեզօծ՝
Արարերեն խօսքերու շարք մը միայն :

Անկիւնը՝ մարդ մը , աշխարհքին պահող քեն ,
Վայելելով իր Նարկիլէն , և ախորժ ,
Ըզգայով այս հեծկլտուքի նուագէն ,
Եւ օդին մէջ ցընցող մուխէն թոյլ ու գորշ :

Եւ իսկոյն քե՛զ կը յիշեմ , երբ անխուռլ
Կ'ունկընդրես միշտ հառաջանքիս և կարծես
Հաճոյք կըզգաս , այդ մարդուն պէս , դիտելով
Մուխը սրբութիս կրակին զօր դուն կ'արծարծես :

25 Մայիս 99.



ՈՒՍՆԱԼՈՒ դեմ գիշեր մնէ լուռ . ու տխուր .
Մութ մը վճիտ , լեցուն լոյսէ բիծերով ,
Գիշեր յըստակ , համեստ իղձի մը պէս , ուր
Կը գծագրուի աշխարհ՝ տարտամ գիծերով :


Այս մութը չէ այրիին քօղն , այլ առուոր
Երեւնալու համար հնարուած թելը նուրբ .
Ընդհամարեւ միայն տուող շղարշը՝ որ
Կը ցուցնէ դեմքերն ամեն գողտր ու սուրբ

Ես աւելի կը սիրեմ մութն այս պայծառ .
Անգաղտնապահ ցորեկներու լոյսերէն .
Ինչպէս կ'նոջ համակրութիւնն անբարբառ .
Բացէ ի բաց խոստովանած իր սէրէն :


10 Մայիս 99.

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ՍԱԽՎՈԹՆ ՈՒ ԻՍՐԱՅԷԼ



Ե. Գ. Մ.



« Եւ լեռան Սինա ծխէ՛ր
առ հասարակ . քանզի
իջեալ կայր Աստուած ի
վերայ նորա հրով , եւ ե-
լանէ՛ր ծուխ նորա իբրեւ
զծուխ հնոցի : Եւ զար-
հուրեցաւ ամենայն ժողո-
վուրդն յոյժ . քանզի հա-
սանէին ձայնք փողոցն ՚ի
բաց , յառաջեալք եւ
սաստկացեալք յոյժ :

Մովսէս խօսէր , եւ Աս-
տուած տայր նմա ձայն : »
Ելք . ԺԹ . 18—20 :

ԶԳ հի՛ն ու մե՛ծ
ալ քերէւս . Յիշա-
տակով գետընկէջ օ-

րէնադրին ու գիտուն ծանօթներուս՝ ա՛յս-
պէս կը մտածեմ երբ բիրտ յոգնութիւններէս
ետեւ կը թողուի բրիչս ու ձեռք կառնեմ դը-
րիչս արձանացունելու համար թարմ սպա-
ւորութիւններս՝ յանդիման այն սուրբ եւ ան-
հնաւի զաբիրին իսրայէլական , յոր կը մազ-
նիսանայ՝ չորս հազար տարիէ ի վեր՝ աշխար-
համուտ ժողովուրդին հոգին ու մարմինը ,
խո՛ր , պա՛րզ ու ինքնահաւա՛ն ալ տեսիլներով
մնած հոգին , եւ օրինական անձուկներով
ձմլած մարմինը :

Զմերային չարաթ—կիւրակէներս արդէն
անցուցած եմ մեծ Մովսէսին մեծ Գիրքովն
ու հին օրէնքին խոկումներովը . ուստի ,
գէթ հոգեբանօրէն , ոստում մը ըրած չեմ ըլլայր
նորէն հինին այս ակնարկութեանցս կողմէն :

Սաւվօթի , այսինքն հրէական Պէնտե-

կոստէին , առաուն (մայիսի 3/15) կանուխ
կարթունհամ՝ զի օր առաջ պատրաստուած
ալ էի ներկայ գտնուելու նոյն առաուն ժողո-
վարանը :

Արդէն հինն իսրայէլ սկսած էր աղօթել
ժամ 8¹/₂ էն ի վեր՝ մինչ ես հազիւ 10 ին կըր-
ցայ բանալ աչքս եւ չրթունքս , միտմն յա-
ռելու համար տիեզերական դարբին ու միւ-
սովն աղօթելու համար նախ հանդէպ Անոր :

Կէս ժամու մէջ կ'աւարտեմ ամէն բան ,
լուացք , հանդերձանք , աղօթք . եւ ջերմե-
ռանդ քան զՀայ՝ խանդավառ իբրեւ զՀրէայ ,
կէս ժամու ալ թեթեւեղութեամբ կը ժա-
մանեմ Մեծ ժողովարանին դուռը , ճիշդ այն
ծովեզերեայ թաղն , որ տեսած է աղայու-
թիւնս եւ աղայութիւններս :

Անվարան կը մտնեմ ներս մովսիսական
այդ Տալէթէն , վաճն զի ամի՛սներ առաջ
առած եմ կրօնապետէն պատուարեր թոյլ-
տուութիւն մը :

* * *

Ժողովարանին արտաքին բակը՝ որ լե-
ցուն է , շատ չտարբերիր Պօլիսի քրիստոնե-
այ՝ մանաւանդ Հայ՝ եկեղեցիներու բակե-
րէն իր անդորրիկ բիւզանդական սեղմու-
թեամբը , Իսկ ներսի չէնքը , բուն տաճարը ,
բաժնուած է երկուքի . մին ծախ , միւսն աջ
կողմը : Եւ երկուքն իրարու յարկակից :

Գռնապանէն առնելով մուտքիս նշանը՝
ըստ սովորութեանս կը մանեմ աջակողմեա-
նին ներքնադուռնէն , որուն ճակատն ուղ-
ղակի արեւելք նայելու առաւելութիւնն ալ
ունի :

Առժամն վիճակէն կը կռահեմ որ աւար-
տած է այդուն առաջին մեծ ժամը , բուն

օրհնեցաւր, հոն միայն քանի մը ազօթաւոր զլուխներ ճերմակ ճերմակ՝ մրմնջելով կը տատանին աստ անդ՝ ովկէանի մը խորունկ եռեւեփներուն եզերքն հասած իրրեւ վերջին ալիքները փրփրուն :

Տաճարն ալ երկայն քառակուսի սրահ մըն է պարզ ու կոկ, ցածկէկ ձեղունով եւ հին ոճով՝ բաւական ընդհատ այն յաղթ ու մարմարաչէն Սինառոններէն, որոնք տեսած էի Աղեքսանդրեան կողոսականներուն (Colossal) մէջ :

Ճակատը կ'երեւի անփոյթ փայտէ քանդակուած աւանդարան մը՝ պատուհանի ձեւով, վարագործած ոսկեհոռ կերպաներով եւ ջահուած քանի մը կանթեղներով, որուն աջակողմը զրուած է քահանայապետական ամրոտը :

* * *

Ու այդ աւանդարանին երկու թեւերէն սկսելով շարուած են՝ ամփոթաւորի ձեւով՝ քառասուն յիսունի չափ անխախտ նստարաններ, որոնց վերեւն ալ զուգահեռաբար շինուած է՝ ձեղունին կից՝ վերնատուն մը վանդակեալ կանանիին համար, վերնատունին ձախակողմին եզրն է երգասաց դպրիկներուն դասը՝ յակուրջի շինուածքով :

Դաս մըն ալ, աւելի մեծ ու հաւկթաձեւ, որ մանաւանդ սրբարան բեմի տարազնունի, կ'երեւի սրահին ճիշդ կեդրոնը, անջրպետուած կրկնակ ամրոտաշարքով մը՝ մին ներքին, տիրացուներուն համար, միւսն արտաքին, դպրից մանուկներուն համար :

Չորս հինգ սիւնակ կ'ամրառնան այդ սրբարան սրահակէն դէպ ի ձեղունը, ճակատըն ալ՝ աւանդարանին ճիշդ դէմը՝ կայ ուռուցիկ մեծ զրակալ մը ամպիոնաձեւ ու խորհրդական մթազոյն ծածկոցով, որուն վրայ կ'երեւի փոքր ոսկեղիկի մէջ առնուած երաշայական վերտառութիւն մը՝ յայտարար թեւեւ կամ մակագիր օրուան տօնին :

Ու այդ միջնասրահին ալ հանրական դրոշմն է վայելչութիւն անցոյց, որ միայն ընթերցիկ սանրու շուրջ ներկայութեամբը կ'առնէ զուարթ ցոյց :

* * *

Ներս մտած միջոցիս՝ այդ ամպիոնաձեւին առջեւ ցած ձայնով կ'ազօթէր ծերուկ սաղմոսասաց մը. նստարաններուն վրայ ալ քանի մը սաղմոսաւորներ կը տատանէին՝ ըսպասելով երկրորդ ժամուն :

Ըստ քրիստոնեայ սովորութեան զլուսաբայի, ու աչքս սրբարանին յառած համակուեցայ նորամուտի լուռ շփոթներով, երբ երիտասարդ պաշտօնական մը ինծի մօտելով՝ ակնարկեց որ փակեմ զլուսա ու բազմիմ նըստարանիս վրայ :

Հարկեցայ անսաղ պաշտօնական ակնարկին : Երբայեցին գոց կը գործէ ու գոց կ'ազօթէ :

Ժողովարանին մէջ ալ՝ միայն ես կամ օտար, միայն իմ անքօղ կո՛ւրծքս կը մատնէ հայութիւնս. մնացածը մէկ քանի սաղմոսերգուներ են՝ ազգովին եղբայր իրարու եւ մարդկովին հոգեղբայր ինծի ալ :

Շատ չանցնիլ՝ երամ մը մանկտի ծանրութեամբ ներս կը մտնեն եւ կը բազմին միջնասրահակին շուրջ նստարաններուն վրայ, ազօթագիրք ի ձեռին եւ աչք ի խոնարհ :

Հետզհետէ կը հասնին մեծերն ալ՝ սրահին հանրական գնացքը տակաւ կ'առնէ՝ մանաւանդ տեղւոյ անձկութեան ու իտայէլական պարզութեան բերումով՝ ընտանեկան տօնի մը հազորդական երանգը. նշանակելի է եկողներուն մեծ մասին սատակ հագուածքը, որմէ բացառութիւններ մըն են քանի մը նոր երիտասարդներ՝ եւրոպական տարազով հագուած, եւ ասոնք կը թուին իրենց նոր սերունդը կամ, այսպէս ըսենք, իրենց ազատամիտները. միջնասրահակին ամբիոնին առջեւ դեռ մրմնջելու վրայ էր ծերուկը՝ երբ մտնելէս քառորդ մը ետքն հասաւ հոն նուիրապետական փութկոտութեամբ երիտասարդ Հահամ մը. առոյգ, սեւահեր, սուրիական դիմագիծներով, կապոյտ գլխանոցով եւ հեղինակական դիմառնութեամբ Հահամը :

* * *

Ողջունելէ ետեւ սրբութիւնը՝ ծածկեց իր զլուխն սպիտակ մետաքսաշալովն եւ քանի մը անգամ ամբիոնին առջեւ դառնալով, մրմնջեց խորհրդական բառը, նշանը տուաւ

ու սկսաւ աւուր պատշաճի սրբասացութիւնը, որուն դաշնորէն կցորդեցան շուրջի սաղմոսերգունքը :

Երիտասարդ հանդիսադիրին զիլ ու պամ ձայնը տուաւ հանդէսին հզօր ու փայլակնաձեւ սկիզբ մը , եւ պատկառոտ ներկայութեանս դիմահար (Choquant) ոստում մը :

Ինծի անծանօթ էր բարբառն , որով սկիսաւ ինք , այլ կենդանի եղանակը ծանօթ ու շատ մօտ ալ էր հայ օրհնեցութեանն սահուն շոյտութեան եւ սաստաւանկութեան մասին միայն նշանակելի տարբերութեամբ : Արեւելեան երբայիկ , ու արաբ՝ պարզ , զայրական ու մեղկաշօշափ չհշտերով ներդաշնակուած օրհներգութիւն մը , որ աղբւրքաւոր ու անխամարար իմն կը հոսէր զեւտականին բռնկած շուրթերէն՝ ընելու էր անշուշտ , մանաւանդ հիւր ներկայի մը վրան , ամէնէն ազդող ներգործութիւնը : Երբ մը զօրաւոր այնքան ու այնքան հարուստ , որ աղօթարանին շրջափակն ու դուրսի բակն իսկ արձագանգելով՝ նեղ կուգային պահելու զայն իր սեպհական սրբավայրին մէջ :

* * *

Բազմութիւնն ալ անցած էր հարիւրը , եւ արիական դէմով մը կը կցորդէր իր մըրմունջները հանդիսադիրն սրբասացութեանցը , որ երթալով կը զայրանար ու կ'առնէր հարցուկի մը նուիրական ուռուցումները . աչքն յառած մովսէսական աննկուն գիրերուն , միտքը սեւեռած աստուածատես գաղափարներու եւ հոգին անհուն էին՝ բոցավառ ու օրինաւոր ամբարձումներով , որ կը տանին հնապաշտ սիրտերը մինչեւ քառասուն դար ետեւ , ու իրազէտ միտքերը մինչեւ Սինայի հրակէզ բարձրութեանց ու տապանակի դասական սրբութեանց :

Ես՝ ոչ յոյժ օտար այդ ոսկի հնապաշտութեանց՝ հիացումով անքթիթ ականատես մը եղայ Քահանային խանդավառութեանցը , որուն նոյն միջոցին հագած սպիտակ մետաքս շուրջառն ալ կը նշանակէր՝ թէ հասած էինք արարողութեան ծանր ու նշանակաւոր տեղուանքը , բուն սինայական խորհրդածութեանց :

Հոն , հոն էր որ երբ՝

. . . Սիրան ուռուցիկ կուրծքն 'ի հեծ ,
եւ քան ըզլափ մարդոյ՝ տեսին եղեալ մեծ ,
Անմահական սրբուէր պատգամս 'ի շրժանց ,
Աստուածարեալ հուպ եղելոյ դիցն յազդմանց (1) :

Ու թրթռուն վանգերով արտասանեց մեծ անունն Իսրայէլ եւ յոյս անունը Փրկիչ՝ ալ սկսաւ իմ ալ զեղանիլ սիրտս ու լեցան զիջին աչքս , մինչեւ հարկեցայ խոնարհիլ ու ծածկելով գլուխս՝ արտասուել . . . Անի՛ Եռսեփ ախիֆեւ (2) . . . Հայրն Արահամ , աստուածատեսն Յակօբ , Յովսէփ , Բենիա-մին , Լոյսն Մովսէս , ու կայծակն Եսայի յօրինեցին տեալական պարակ մը նամ ու սըրբացած երեւակայութեանս հանդէպ . մանաւանդ Դաւիթ , մարմինէ քնարն այն Դաւիթը , քերթող արքայն , զոր շատ կը յիշեցունէր քերթող Հահամին տաւաղական ձայնը , խանդն ու բովանդակ տարազը պարարտ :

Ամբողջ սրահը Իսրայէլ կտրած էր , ամբողջ վայրը Իսրայէլ էր ու Իսրայէլ կը հընչէր . ինծի ալ՝ արդեօք ամօթ պիտի համարուի՝ երբ ըսեմ թէ ես եւս այդ ձայնական հեղեղին մէջ հոգեփոխուած խորայն մը դարձայ , իբրեւ խորայն կը խորհէի . իբրեւ խորայն կը զգայի :

* * *

Բնական այդ փղձկումէս ալ խրախուսեալ ու գիտակից ներկայութեանս անկեղծութեան , զոր կը քաջալերէին ասպնջական ծերակոյտին մտառես ակնարկները վստահ , կը համարձակիմ դիտել շուրջս ալ՝ երբայիկ աչքով , Վերնայարկի երգեցիկ մանուկներն ալ սկսած են զուարթ ձայներ առնուլ՝ մեր տիրացուելիներէն ոչ ընդհատ աղուութեամբ եւ պարկեշտութեամբ , որ պատիւ կը բերէ իրենց :

Հանդէսին կիսուն ատենները՝ քահանան վերջացուց իր օրհներգութիւնները . քանի մը կցորդներով հանդիպակաց սրբարանին առջեւ երթալով երկրպագեց ու համառօտ մաղթանք մը մրմնջելէ ետեւ՝ բացաւ սրբարանին փեղկերը , որ չունէին ո՛չ հին Սրբութիւն Սրբութեանցի պերճութիւնը , ո՛չ ալ մեծ տաճարին ու տապանակին սրովրէատար ձօխութիւնները :

(1) Վերգիլ Ենէակ. 2. 73—76 :

(2) Ես եմ Յովսէփ , եղբայրն ձեր :

Այդ նուիրական պահարանին անկիւնը դրուած էր՝ արծաթեայ բուրվառածեւ կանթերով փղոսկրէ դաւաղաններու վրայ ոլրած սրբապանը⁽¹⁾ (S. Cylindre), զոր արարողական ձեւերով մը առաւ քահանան ու ժողովուրդին ի տես ամբառնալով՝ յանձնեց ապա նշանակեալ կնքահայր երիտասարդի մը ձեռքը :

Նոյն հետայն կազմեցաւ փոքրիկ թափօր մը , ու սկսաւ հանդէսով յառաջել սրահամէջ սրահակին շուրջը , բաւական նման եկեղեցական մեր ծանօթ մէկ թափօրին :

Ես՝ աւելի՛ հետաքրքրուած կը սկըսիմ տեսասիրել անցած դարձածը , եւ նախ հետեւէն աչքիս կը դիպին Սրբազանին տիւրական կարմիր թաւիչին վրայ երբայական տառերը բոցազիծ , որ կը համառօտեն հոն Սինա մը եւ որոնցմով տաք պարզ ու հակիրճ ճառագայթներ բաշխեցին երբեմն իմաստութիւն մը՝ նախ հրեայ ապա բովանդակ հաւատացեալ աշխարհին : Այդ անյաղթ տառերուն հանդէպ՝ զոր կը թեւատքօղեն գնառն դպիրներ եւ կը ինկնին խորունկ սրբասացութիւններ՝ մարդ կ'եկեկտրանայ բովանդակապէս : Հոն՝ յանդիման այդ բոցածեւ գիրերուն՝ յիշեցի Տաճարանեային փրկարար ներգործութիւնը մեծ աղգերու բարքին ու ճակատադիրին վրայ , յիշեցի նաեւ հայ փիլիսոփայի մը ⁽²⁾ մարգարէութիւնն հրեայ ազգին համար՝ թէ « Երկարակեաց եղիցի ազգն այն , . . . » ու անդրադառնալով հոգեբանութեանս վրայ՝ առի լայն շունչ մը իմ ալ օրինապաշտ սկիզբներուս համար . իսկոյն գիտակցեցայ թափօրին անդարթ այլ օրինական վսեմութեանը :

Մէկ բառով , համակրեցայ հոն եկեղեցացեալ Իսրայէլին , սկսնելով հանդերձ սրախ ուրոյնութիւնը :

* * *

Թափօրը կ'ընթանայ հակիրճ մեծ վայելչութեամբ մը . սրբապանը մէջտեղէն ու քահանան յետուսա՝ արծաթեայ մականը ձեռքը :

(1) Ներկայ յօդուածը կը սկսի նոյն սրբազանի պատկերով , որուն վարի ծայրը , երբայական գիրերու նմանողութեամբ դրուած է զլիազիր « Ա » մը .

(2) Խ. Պ. Մխաթեան :

Հանդէսին ընթացակից են ընդամէնն ութ տասն հոգի , այլ շուրջ ժողովուրդն եւ մանրերամը յուզուած կը դիմէ այդ վառ կեդրոնին , ու անձնւրը կ'ողջագութէ Գլանը մատնացի շօշափական համբոյրներով՝ մինչեւ որ հասնելով միջին ամբիոնին առջեւ՝ զեւտականը անդամ մը եւս կ'ամբառնայ զայն ի ցոյց աղօթականներուն , եւ ապա կը բանայ նուիրական ոլորքը՝ ձեռքի արծաթեայ կոկիկ մականովը նշանակելով աւուր երգերը սեւ տառերով , թերեւս սամարական , լեցուած են այդ հին էջերը՝ որոնք , ո՛վ գիտէ , քանի մը հազար տարուան հնութիւն ալ ունէին եւ զորս հանդիսապէս համբուրելով՝ կը դնէ ամբիոնին վրայ , Կը սկսի կարողալ այդ խորհրդագրութիւնները պակուցանող եղանակով մը՝ աւելի՛ պերճ ու յորդ եւ աւելի՛ բաշխապատիկ խանդով , ներկաներն ալ մրմնջածայն կը դաշնակցին իրեն :

Եւ այս երկրորդ օրհնեղութիւնը կը տեւէ իրրեւ քսան վայրկեան , ուր նշանական է նորէն քահանային եռանդազին սրբապաշտութիւնը , որմէ ետեւ երիտասարդ Եփօր մը բեմ , ելնելով կը հրատարակէ վճարող զբրակարգացներուն անուաները , որոնք ըստ անուան կարգի սանդղղքէն ելնելով՝ կը մօտին Հահամին , լեցունելու համար իրենց դերը :

* * *

Ամբողջ արարողութեան մէջ , որ մեծ մասով յիշատակութիւնն ալ է հին օրէնքներուն , Սինին ու Սինային՝ կայ աննուաղ հողի մը վեհ ու պարզ , լծորդուած անսեթեւէթ գոյներու եւ հին ձեւերու՝ նման այն պատգամ տախտակներուն , որ ունեցան արեգակի մը ծագումին պարզ վսեմութիւնը՝ վարագուրած միայն Սինային ամպերովը : Հոն չիկային ո՛չ ծխաշունչ որոտն , ո՛չ ամպէ սիւնը , ո՛չ ալ այն բարկաճալթ փայլատակմունքը՝ որ բաց երկինքի մը տակ լարեցին թափառիկ ազգին տրտնջող միտքը . սակայն նուիրական քահանային ձայնն հզօր ու ծերակուտին ազդական ծանրութիւնը՝ հնաբաւոր հաւատարմութեամբ կը պատկերէին այդ նահապետութեան ու աստուածախօսութեան օրերը :

Ինչ կայծ որ հազարներով տարի առաջ՝

լուցուելով աստուածային ու մարդկային ի-
մաստութեան դաշնաւորութեամբ փրկած ու
կրթած էր խոտապարանոց Իսրայէլը . նոյնն
հոն՝ ցայսօր իր ծրարուած ոսկի մոխիրներուն
նեղքեւէն վայրկեան մը դուրս գալով՝ կը
փայլատակէր արուեստօրէն նոր դեւտակա-
նին արծաթ մականին ու հրեա հագագին հը-
պումներովը՝ լոյս , անխարդախ լոյս տալու
վաղնիւց ազգին , որ կը տեւէ դեռ անվը-
կանդ Յակոբի օրերէն մինչեւ այսօր՝ անհրա-
ժեշտ օրինապահութեամբ իր պատէքին ,
Սաւօթին , Սաւաթին , Ծոմերուն , հեռու
Սիօնէն , հեռու Բեթէլէն ու Լիբանա-
նէն « Ընդարձակուած 'ի ծովակողմն եւ ընդ
արեւելս եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ »
Ծննդ . ԻԸ . 14 :

* * *

Աշխարհի չորս կողմերը չորս հողմերու
նշաւակ այդ ժողովուրդին միակ նշանաբանն
ու խարիսխն էր եւ է այդ տասնեակ պատ-
մել՝ հիմն ամէն օրէնքի ու փրկաօգնալու-
թեան , որուն կրթնած կը տեւեն պետու-
թիւններ ու մեծ աշխարհներ . ու ինք Իս-
րայէլ ալ՝ ատոնցմով չէ՞ որ կը պահէ իր յա-
ծուն գոյութեան հետ՝ իր բարքի ու վարքի
պարզութիւնը , իր այլամերժ տնտեսութիւնն
եւ անկեղծութիւնը , իր ընտանեկան կեանքն
ու իր աշխարհամուտ կացութիւնը :

Եւ ասոնք բաւական ցոյց մը չե՞ն՝ թէ
այդ տասնեակին մէջ մարդկայինէ տարբեր
իմաստութիւն մը բունած է :

Օրինական այդ իմաստուն օծութեամբ
էր՝ որ նոյն օրուան հանդէսն ալ անուա աղ-
ղու ահարկութիւնն այն , զոր նկատեցի մա-
նաւանդ ծերակոյտին խորին խորշոմներուն
եւ զրակարգացներուն անժպիտ շուրթերուն
վրայ :

Ես ալ՝ իբրեւ ջերմ աստուածաշնչական
մը՝ բռնուեցայ հոն չափ խոր զգացումներու
եւ նշանական իմաստներու ուժգին այլ քաղ-
ցըր յորձանքի մը , զոր չկըրցայ ալ ծածկել
ո՛չ ներկաներէն ո՛չ ալ զրական հրապարա-
կէն . եւ դժուարաւ պիտի մոռնամ կեանքիս
մէջ ալ :

Ու երբ ալ դուրս կ'եննէինք ժողովարա-
նէն՝ ծանօթ դէմք մը մօտելով ինծի հարցուց .

— Ինչպէ՞ս , հաւնեցա՞ք մեր հանդէսին :

Պատասխանելի՛ ինչ որ կուգար ներսէս :

— Եէհովայի փառքը գեղեցիկ ու երկըր-
պագելի՛ է ամէն տեղ ու ամէն ազգի մէջ ,
բայց մա՛նաւանդ Իսրայէլի մէջ , մանաւանդ
հոն է որ վսեմ ալ է :

Այո՛ , Իսրայէլի մէջ , որ անդուստ սկիզ-
բէն գիտցած է պաշտելով ապրիլ :

Նա կրանի՛ ազգին , որուն օրէնքին ա-
ռաջին հիծն աստուածապաշտութիւն է եւ որոյ ,
ըստ այնմ ալ , « Տէր Աստուած Յակոբայ
օգնական է նմա » :

Իսրայէլ :

Իւսկիւտար
20 Մայիս 1899

ՅԱՅԳԵՐԳ

ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ



ԿՈՒՐ, աղուր լուսին տակ

Նստինք քով քովի .

Անոր լուսովն ըսպիտակ

Հոգինքս լեցուի .

Ոսկեհեր երազներու

Թեք մեզ տանին

Ցաւերու հովտեւ հեռու ,

Ծոցը անհունին :

Կապուտակ ծովուն երես

Կը փորձէ գոգիս .

Թրջեցան արցունքներես

Հողերը ուղքիս .

Սիրուք քեզի օրեւան ,

Դուն սրտիս կանքեղ .

Խառնուինք այս գիշերուան

Ու հայինք մէկտեղ :

Սիրտ մը , սիրուելու համար

Տուա քեզ Աստուած ,

Վառեց գլխնուս կամար

Աստղերով լեցուած .

Սա կոյս լոյսերուն , եկնր ,

Սրտերնիս բանանք ,

Երազէ երազ , մաքնր ,

Թռչինք ու մոռնանք :

Լուս կեցեք , անոյշ հովեր

Ցրուեցեք մէկդի .

Անոր հետ երկինքն ի վեր

Մենք պանանք պիտի .

Ան կախեց ուտես ի վար

Թեքն ըսպիտակ ,

Շունքն անուշ հոգւոյս բուրմառ ,

Կը թռչինք շիտակ :

10 Մայիս 99

ՎԵՐՋԱԼՈՅՍԷՆ ԵՏՔԸ

(ՆՈՐԱՎԷՊ)



ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ԱՐԻՒՂԻ անտուկներէ շինուած լայնիկ աթոռակի մը վրայ, հաստփոր մարդուկը անընդհատ կը ֆըշար կիզիչ արեւի մը ճառագայթներուն տակ, որոնց թափը կորսնցնելու համար քուրձէ ծածկոյթ մը անգամ չէր զրուած խանութին առաջքը :

Նպարավաճառի խանութ մըն էր, բաւական բարեկեցիկ թաղի մը մէջ հաստատուած, ուր երեք ուրիշ խանութներ ալ կային, գրեթէ միեւնոյն առեւտուրին համար, եւ համեմատապէս շատ աւելի լաւ յարդարանքով : Արեւը իր միջօրէի սաստիկ տաքը կը թափէր եւ մարդուկը՝ որուն մարմինը երկայնքին մեծնալէ աւելի փորին ու հակափորին համեմատութեամբ զարգացած կ'երեւար, ձեռքի ահագին կարմիր թաշկինակովը շարունակ կը սրբէր քրտինքի խոշոր կայլակներ՝ որոնք լայն ու անձեւ ճակատն ի վար կ'իջնէին՝ անոր աղառտ ու իւղաւէտ դէմքին զանեցնող խոնաւութիւն մը տալով :

Եւ այդ վիճակին մէջ՝ ուր զայն ամէն բանէ առաջ ճահիճէն նոր դուրս ելլող դետածի մը պիտի նմանցնէին, գլուխը հակած էր աղաէն սեւցած տետրակի մը երկու էջերուն վրայ՝ որոնք վերէն վար թուանշաններով եւ կտտ աւելի ճիշդը՝ նշանագիրներով ծածկուած էին : Հաշիւը զբաղած էր եւ անգոյն գրիչ մը ձեռքը՝ կը գումարէր սիւնակի մը բովանդակ երկայնքը բռնող թուանշաններ որոնք տետրակին միւս էջին վրայ նշանակուած գումարէ մը տարօրինակ կերպով պա-

կաս կ'ելլէին : Հասոյթը ծախքէն քիչ եղած էր նոյն ամսուն եւ այս բանը բոլորովին կը կատողեցնէր զինքը :

Մարդուկը յանկարծ ընդմիջուեցաւ իր հաշիւներուն մէջ . խանութին դուռը բացուելով ներս մտաւ բաւական երկայնահասակ ու ալլանդակ դէմքով մարդ մը որ ամէն գործ կ'ընէր, պայմանաւ որ պատուաւոր չըլլար ան :

— Բարեւ, Մանկասար աղա, աս կէնի՞ մի հիսապ, անպար սօնը պէր սըւոր :

Մանկասար աղա՝ առանց բարեւին պատասխան մը տալ մտածելու, եւ աչքերովն ալ միշտ տետրակին էջերը գրկած, պատուաւոր խանեց սպասուած մէկը ընդունողի շեշտով :

— Ի՞նչ ըրիր նայինք . առի՞ր երեք ոսկին :

— Հէլպէ՛էթ . . .

— Տո՛ւր նայիմ :

Նորեկը երեք ոսկի հանեց բաճկոնին գրպանէն ու սեղանին վրայ դրաւ . երեք կարմուռկ ոսկիներ՝ զորս Մանկասար աղա ակնթարթի մը մէջ անհետացուց տաքատին գրպանն ի վար : Ու նորէն սկսաւ իր բաղդատական հաշիւներով զբաղիլ :

Միւսը՝ յանկարծակիի եկած էր կարծես .

— Մեր փարան ո՛ւր մնաց, Մանկասար աղա :

— Քանի մը օր մնաց, քանի մը օր մնայ :

— Աս էղա՞ւ մի եա՛ . . .

— Ի՞նչ ընեմ Յակոբ աղաս, աս օրերս շատ բարայի պէտք ունիմ . նայէ՛, տասվերեք ոսկիի բաց մը կայ աս ամիս :

— Ատամ սէնտէ, ասոր ատանկ կ'երթայ, վաղը ամէնքը մէկ կ'առնես :

— Բէք աղէկ ամա, աս աստի ամիս է ատանկ ըսելով կ'երթանք կոր . հէմ յոգնինք, հէմ վրայ տանք . խուս՞ծ բան է աս :

— Ճանճմ երեք մէճիտ է ամէնը, մեծ պան մը չէ . տո՛ւր տէ մենք ալ խալըսինք :

դուն ալ . հէ՛մ առ երեք ոսկին պաշխա մարդ
էր կրնար առնել . երես պէտք էր չիտակը .
Խանութին աշկերտը , որ թէ՛ սպասա-
ւորութիւն կ'ընէր եւ թէ՛ օգնականն էր մար-
դուկին , ներս մտաւ այդ պահուն եւ խօ-
սակցութիւնը ընդմիջուեցաւ : Մանկաստար
աղա անգամ մըն ալ երկու էջերուն վրայի
գումարները բազդատելէ ետքը դոցեց տետ-
րակը եւ սեղանին դարակը բացաւ հապճէպ
շարժումով մը :

Չորս պզտիկ մուկ միեւնոյն առեն դուրս
ցատկեցին դարակէն՝ որուն մէջ պանիրի խե-
ւերանքներ կը վխտային , եւ մարդուկին սը-
րունքներն ի վար սահելով դացին անհետա-
ցան մէյմէկ ուղղութեամբ : Տեսարանը կ'ե-
րեայ թէ անսովոր բան մը չ'ունէր երեք
մարդոց համար , որովհետեւ անոնցմէ ոչ ոք
պզտիկ շարժում մը ըրաւ մուկերը տեսած
միջոցին : Մանկաստար աղա՝ միշտ գումարնե-
րուն վրայ մտածելով ստորակը դարակին մէկ
անկիւնը նետեց ու գործ մը պատրուակելով
մեքենաբար գուրս ելաւ խանութէն , երկ-
րորդ անգամ ներկուած կասկարմիր ու ճմռթ-
կախ ֆէս մը ձեռքը :

* * *

Այդ միեւնոյն թաղին մէջ ժամանակ մը
անդեղէնի բաղամթիւ վաճառատուններ բաց-
ուած գոցուած էին յաջորդաբար , որը մըր-
ցումին չգիմանալով , որն ալ արհեստէն
ձանձրանալուն : Անոնցմէ մէկ քանին , իրա-
րու վրայ շատ մը տարիներ շարունակուած
էին . ու մէկը մանաւանդ՝ անուն մըն ալ
յաջողած էր ձգել թաղին մէջ : Եւ ճիշդ այս
վերջինին տկար տարիներուն էր որ քանի մը
մարդիկ մտածեցին հիմնել բողոքովին նոր
վաճառատուն մը՝ ուր ամէնէն աւելի տեղա-
կան լաւ՝ ու եւրոպական արտադրութիւն-
ները ընդհանրապէս՝ պիտի ծախուէին : Կոր-
ծի մարդիկ ամէնքն ալ , շուտ մը իրականա-
ցուցին իրենց ծրագիրը , ու վաճառատունը
բացուելով քիչ ատենուան մէջ մեծ յաջողու-
թիւն գտնել սկսաւ :

Սկիզբի օրերէն իսկ , Մանկաստար աղա՝
որ միւսին մէջ կը պաշտօնավարէր նախա-
պէս , եկած յարած էր նորահաստատ վաճա-

ռատան : Նախանձոտ , ծակաչք եւ վերջին
ծայր յոռի բնաւորութեան տէր մարդ մըն էր .
ամէն ոք բնաղբական հակառակութիւն մը
ունէր անոր դէմ . հաստատութեան վարիչ-
ներն անգամ աղէկ չէին մտածեր իր մասին եւ
անոր յատկացուցած էին առանձին տեղ մը՝
ուրիշ էր կրնար իր գարշութիւնը հոնալ ա-
սոր անոր վրայ :

Այս պարագան՝ իր նախանձոտ ու ծա-
կաչք բնաւորութեան դրդումներուն միացած ,
ամէնէն ծայրայեղ եւ ամէնէն չար մտածում-
ներուն առաջնորդած էր զինքը . երբեմն կը
խորհէր տարբեր վաճառատուն մը հիմնել ու
մրցիլ անոր դէմ որուն հացը կ'ուտէր , բայց
կը զգար թէ չպիտի կրնար գլուխ ելլել ա՛լ
աւելի գործի տէր ու մանաւանդ պատուաւոր
մարդոց հետ . եւ իր այս անկարողութեան
գաղափարը ծնունդ կու տար ուրիշ մտածում-
ներու ալ , ասոնցմէ մէկուն մասնաւորաբար
կառչած էր ամէնէն աւելի . կ'ուզէր ո՛ր եւ է
կերպով սիրաշահիլ վաճառատան կալուածին
տէրը եւ միջոցով մը հիմակուան մարդիկը
դուրս նետել տալով ինքը նոր վաճառա-
տուն մը բանալ հոն : Այդպէսով պիտի կըր-
նար իր հարուստ ըլլալու ծրագիրը գլուխ
հանել , քանի որ թաղին մէջ իրմէ զատ պի-
տի մնար միակ վաճառատուն մը՝ որ բազ-
մատեսակ ապրանքներ չծախելուն՝ մրցակցի
մը արդեւքը չպիտի կրնար հանել իր առջին :
Այս միտքով դիմումներ ըրած էր քանի մը
անգամ , բայց վաճառատան տէրը ականջ չէր
կախած , միեւնոյն առեն ալ իբր պատուա-
ւոր մարդ՝ գործը գաղանիք մը պահելով :

Եւ ամբողջ տարիներ այդ երազով ապ-
րած էր խեղճ Մանկաստար աղան : Օրէ օր
այդ միեւնոյն երազին հազար ու մէկ երանգ-
ները երեւակայած էր , միշտ ոիւ մը սնուցա-
նելով իր ընկերներուն դէմ ու չար նախանձ
մըն ալ անոնց համար՝ որոնք իր պետերն էին
այդ ընդարձակ հաստատութեան մէջ : Մին-
չեւ ան ատեն՝ թաղին մէջ հաստատուած էր
նաեւ ուրիշ վաճառատուն մը՝ որ մեծ յաջո-
ղութիւն գտած էր թէեւ , բայց քանի մը
տարի ետքը դարեցուցած էր իր առուուրը :

Անգամ մը վերջապէս , պատեհ առիթ մը
ներկայացաւ ու Մանկաստար աղա չփախուց

զայն : Իր պաշտօնավարած հաստատութեան գործերը ժամանակէ մը ի վեր շատ ձախորդ երթալ սկսած էին , մինչեւ առեւտուրին մեծագոյն մասը զաղբեցնելու աստիճան : Հաստատութեան վարիչները գէշ աղէկ կը դիմանային դեռ ու կը յուսային մանաւանդ անցողակի տագնապէ մը ետքը ժողովրդութիւն քիչ շատ , ու վճարել գլխաւորաբար վաճառատան յետեւալ ամսականները՝ զորս վարձատուէն ազնուութիւնը կ'ունենար անմիջապէս չափանջելու : Օր մը սակայն , չէնքը ուրիշի մը անցաւ , ու նոր տէրը քիթը ցոլցնելուն պէս , Մանկասար աղա մտածեց այս անգամ ալ նորեկը քրքրել , իր տարիներ առաջուան ծրագիրը յաջողցնելու համար . ու մարդը գտնելով՝ ըսաւ թէ արդի վարձակալները՝ որոնք արդէն շատ մը ամսականներ պարտք ունէին , կը մտածէին դեռ բաւական տոնէն ալ վճարքի խոստումով միայն գոհացնել նոր տանտէրը եւ օր մըն ալ ձգել երթալ՝ այնչափ ատեն առանց վարձքի նստելէ ետքը :

Վաճառատան վարձքի պարտքը չէնքին հետ մէկտեղ փոխանձուած էր նոր տանու տէրին . առտու մը՝ հաստատութեան վարիչները փողոց նետուեցան , մինչդեռ վաճառատան բոլոր ապրանքները ածուրդի կը հանուէին՝ յետեւալ վարձքերուն պարտքը գոցելու համար :

Մանկասար աղան գոհ էր , ու նոյն իսկ երջանիկ . թէ՛ իր ծրագիրը յաջողած էր , եւ թէ՛ այդ կերպով վրէժ մըն ալ լուծած այն խուլ հակառակութեան համար՝ զոր հաստատութեան պաշտօնեաները՝ առանց բացառութեան սնուցած էին իրեն գէմ : Ածուրդին աւարտելէն շատ չէր անցած , օր մը գնաց գրտաւ չէնքին նոր տանտէրը եւ անոր առաջարկեց ինք վարձակալ ըլլալ . բայց միւսը չէնքը առժամաբար վարձու չտալու միտք ունենալը յայտնեց եւ չուզելով բողբոլի կոտրել մարդ մը՝ որ ամէն գործի պառկելուն թիրեւս կրնար իրեն օգտակար ըլլալ , ինչպէս որ եղած էր նախորդ վարձուորներու պարագային մէջ , ձեռքէն եկածը չնայեց՝ միեւնոյն թաղին դիմացի կողմը ուրիշ չէնք մը ճարելու , ուր անիկա անմիջապէս հաստատուեցաւ : Թաղին հրապարակը իրն էր ալ անկէ ետքը :

* * *

Այդ թուականէն ասդին քանի մը տարիներ անցած էին եւ Մանկասար աղա՝ առանց մրցակցի մնացած ըլլալուն շնորհիւ կրցած էր ամէնէն մզլած ապրանքներ քչել , միեւնոյն ատեն ալ արհեստին ամէնէն վարպետը հռչակելով ինքզինքը : Գրեթէ միեւնոյն ժամանակ խանութ մըն ալ բացուած էր թէեւ , բայց ան ալ մտահոգութիւն չէր պատճառեր իրեն :

Մաքուր ապրանք ըսուած բանը գոյութիւն չունէր իր խանութին մէջ . հոս հոն խորշիկներու մէջ զետեղուած այլեւայլ տեսակ նպարեղէններ , պանիրի կլոր չերտեր իրարու վրայ , ամէնքն ալ թանձր իւղով մը թաթաւուն , իւղի տակառ մը , աղտոտ ան ալ ու խանութին տիրոջմէն իր երկարութեամբ միայն զանազանուող , քանի մը ռուսական քարիւղի թիթեղամաններ , ձեղունէն կախուած քանի մը աւել եւ կապոյտ թուղթի մէջ առնուած կոնաձեւ չաքարի կոյտեր , ու կատու մը՝ գորշուկ կատու մը՝ որ անթի եղած ատենը տէրոջը ռոտամանները լցելու կը փութար , որովհետեւ իւղի խաւը միշտ պակաս չէր ըլլար անոնց վրայէն :

Չկային նախնի սիրուն ապրանքներ՝ որոնք հրապուրիչ , տաք շուք մը կու տային հաստատութեան յարգարանքին : Թաղեցիները՝ մեծ մասամբ բարեկեցիկ , բնական է որ իրենց տան մեծաքանակ գնումները չպիտի ուզէին այդ գարշելի մարդէն ընել . բայց Մանկասար աղա ա՛յն աստիճան դիտէր գովել ինքզինքն ու ապրանքը , եւ մանաւանդ ոչքլամի ալ միջոցներուն տեղեակ , կրցած էր կոյր վտահոգութիւն մը ներշնչել թաղեցիներուն՝ իր ու խանութին ապրանքներուն մասին : Ու չա՛ն՝ կէսը գողցուած չա՛ մը , առատ եղած էր բաւական ժամանակ . եւ չարունակաբար բարեբաւածող այդ առեւտուրը կոկիկ հարստութեան մը տէր ըրած էր զինքը ու քօակին հետ փորն ալ ուռած էր երթալով , հակափորն ալ :

Ամէն բան յաջող կը քալէր իր առջին ու բաղդը նպատաւոր փախտ մը կը խաղցնէր անոր վրայ : Օր մը սակայն , այդ միեւնոյն բաղդին անիւը խոչընդոտի մը հանդիպեցաւ ու պարտաւորուեցաւ քիչ

մը ատեն կենալու : Մանկասար աղայի խանութին հետ գրեթէ միեւնոյն ատեն բացուող խանութը աւելի բարգաւաճեցաւ նոր ընկերակիցներու օժանդակութեամբ որոնք ընդարձակեցին զայն եւ յաջողութիւնը առջի օրէն ժպտեցաւ իրենց :

Այդ պարագան չատ ձախորդ էր Մանկասար աղային համար . մրցում մը կը սկսէր . լուրջ , լռիկ մրցում մը որուն պէտք էր դիմադրաւել չընկճուելու համար . բարեբաղդութիւն մը եթէ կար սա էր որ , նորահաս տատ վաճառատունը ռէքլամին ուժ չէր տար . վարիչները յայտնի է որ կը վախնային ծաղրելի ըլլալէ եւ ճիշդ այս պատճառաւ Մանկասար աղա կրցած էր ճողոպորի անկումէ մը՝ որ կրնար վերջինը ըլլալ : Առեւտուրը խախտած էր սակայն , որովհետեւ թաղին թէ՛ կեղծաւորութենէ չախորժող եւ թէ՛ մանաւանդ մաքրասէր մարդիկը՝ որոնք ստիպուած միայն առեւտուր կ'ընէին իրմէ , անմիջապէս յարեցան նոր վաճառատան :

Այս կացութեան մէջ էր որ օրին մէկը՝ Մանկասար աղա իր դէմը գտաւ ճիշդ այն հաստատութիւնը , որուն իր գործառնութիւնները դադրեցնելու նպատակով ալ էր ժամանակին : Այդ վերերեւումը ջլատեց զինքը . նոր վաճառատուն մը չէր դէմին , հապա արհաւիրտ ուրուական մը կը ցցուէր ու միանգամայն զօրաւոր մրցակից մը՝ զոր դիւրին չպիտի ըլլար զգեստնել : Բաղդին անկը չէ թէ միայն կեցած էր , հապա զէպի ետ կը դառնար . որովհետեւ նոր հաստատութիւնը վարժները , իրենց ազնուութեամբ եւ առանց ու եւ ճիգի երեւան կը հանէին Մանկասար աղային ցեց մը ըլլալը :

Մարդուկին առեւտուրը կաղ կրիայի մը զնայքը սկսած էր առնել . յոխորտացող խանութպանը՝ որ անմրցելի կը հռչակէր զինքը այն պահուն՝ ուր թաղին հրապարակը միտ մինակ ինքը կը բռնէր , ինքերմէ ելած էր բոլորովին . դէմքները մրցում չէին ընկերաբան ճիշդ իմաստով . կ'արհամարհէին կարծես զինքը , ջանալով միշտ աւելի գեղեցիկ երեւալ ու մանաւանդ մաքուր : Ու մարդիկը , յաճախորդները , չարունակ կը յարէին իրեն , մինչեւ Մանկասար աղա օր օրի կ'իյնար , ծի-

ծաղելի ըլլալու աստիճան առաջ տանելով ռէքլամի խենթ փորձեր՝ որոնք սակայն ընդհանրապէս անպտուղ կը մնային : Ինքզինքին վրայ խօսած ատեն փորն ու մօրուքը իրար կը խառնուէր ու դէմքը կ'առնէր այն պոգացնող ծամածոթիւնը՝ զոր արջ մը պիտի ունենար , ժպտիլ փորձելով :

Եւ առտուան մէկը՝ նոր փոթ մը իրեն համար . լուր էին տարածած թէ վաճառատուն մըն ալ պիտի բացուէր թաղին մէջ . ու Մանկասար աղա փնտառութենով հասկցած էր թէ սուտ մը չիկար չըջած գրոյցին մէջ . ինքը՝ աւելին կրցած էր իմանալ . նոր հաստատուելիք տարապայման աժանութեամբ առեւտուրի մը պիտի սկսէր , իր յաճախորդներուն թէ՛ մաքուր եւ թէ՛ դիւրամատչելի ապրանք տալու փափաքով :

Բայց անկարելի էր զիմանալ . այս անգամ չափը կ'անցնէր , թող չպիտի տար որ վերջին հարուածն ալ տային իր արդէն իսկ խախտ , խրխլած խանութին . անգամ մը նոյն իսկ յաջողիկ կարծած էր իր այդ մտածումին մէջ , բայց դեռ լայն շունջ մը չառած , վաճառատունը բացուած էր նոյն թաղին մէջ :

* * *

Անկումը սկսած էր , ահաւելի՝ գահավէժ անկում մը՝ որ երթալով կը շեշտուէր : Ո՛չ ռէքլամը , ո՛չ ինքնագովութիւնը , ո՛չ ալ սոր անոր միջոցով իր ապրանքին ու պարկեշտութեան փառաբանումը կրնային անոր առաջին առնել : Նպարավաճառի խանութին համար այն երկարատեւ հոգեվարքներէն մէկը կը սկսէր , որոնք երկար ատեն կը ցնցեն հնթական , հատիկ հատիկ խզելով անոր ջիւղերը ու շունչն ալ կտոր կտոր սպառելով :

Իւրաքանչիւր ամիս խանութին առեւտուրը ա՛լ աւելի զգալի բաց մը կը ձգէր : Առ ու ծախը կատած էր եւ արդէն իսկ մզլած ապրանքները բոլորովին կը լըրճուէին մինչեւ աններկայանալի վիճակի մը մատնուելու աստիճան : Խանութին տեսարակը յուսահատական էր պարզապէս . նախկին շահը , անմրցում անցուած օրերու կիսովին գողցուած շահը օր օրի վրայ կ'երթար . մարդուկին քսակը կը վախճանար ամէն շաբթու , ինչպէս որ փորն

ալ՝ այն այլանդակ , խոշոր փորը , կը ամփէր տակաւ՝ հետզհետէ կաղամբի մը աններդաշնակ ծալքերը առնելով :

Հոգեվարքը , այն անխուսափելի , անկարելի հոգեվարքը՝ որ դիւրաւ չպիտի ձգէր անոր օձիգը , անբողջովին զրկած էր զայն . խեղճը համակուած էր անով : Եւ այդ հոգեվարքին պարուրանքին մէջ տապալակած պահուն , Մանկասար աղան փոխած էր « փարա վաստկելու » միջոցը , աղտոտ առեւտուրէ մը ետքը աւելի աղտոտ գործերու ձեռնարկելով . դրամ կը շորթէր պարզապէս , առ ու ան մարդուն անհատական կեանքին մէջ մտնելով իր անձեւ մարմնին բովանդակ ծաւալովը : Թաղին գլխաւոր բամբասողը դարձած էր եւ իրիկունները՝ սադրանձ խաղացած միջոցին , ամէնէն վատ , ամէնէն զազիր զրոյցներն էր որ կը պատմէր առ ու ան կնկան եւ կամ էրիկ մարդուն վրայ :

Օր մը՝ ճիշդ իր խանութին դէմի տան մէջ բաներ մը կռահած էր . մարդ մը կու գար կ'երթար շարունակ , մարդ մը՝ որուն ընթացքէն ու կերպերէն յայտնի կ'երեւար թէ տան էրիկ մարդուն հետ ո՛ր եւ է յարաբերութեան մէջ չէր գտնուէր : Ու կռահածը հաստատելու համար գծուարութիւն չէր քաշած . երկու օր ետքը զիտէր որ դէմի դրացունին իր ամուսինը կը խաբէր : Ընտանիքը՝ թաղին ամէնէն բարեկեցիկներէն էր ու դժուար չպիտի ըլլար իրեն համար , մէջտեղ հանած պարագային շնորհիւ քանի մը ոսկի նետել զրպանը :

Առտուան մէկը՝ Յակոբ աղան դէմի տունը կը ներկայանար եւ ամուսնական յարկին անհաւատարիմ կինը գանդելով կարելի եղած վերապահութեամբ կը հասկցնէր անոր թէ թաղին մէջ մէկը կռահած էր անցած դարձածը եւ թէ այդ մէկը երեք ոսկի փոխարէն անօրինակ բարութիւնը պատրաստ էր ընել՝ գիտցածին վրայ տան էրիկմարդուն եւ կա՛ր թաղեցիներուն բան մը չըսելու :

Եւ այդ երեք ոսկին էր զոր Յակոբ աղան բերած էր իրեն այն օրը՝ ուր ճշող արեւի մը երեւան հանած աղտոտ քրտինքը կը սըրբէր ահալին կարմիր թաշկինակովը , եւ սրտնեղութեամբ կը հաստատէր թէ խանութին նոյն ամսուան հաշուեկէիոր 13 ոսկի բաց մը

կը թողուր . կինը պարտաւորուած էր համակերպիլ , առաջըր առնելու համար դայթակղութեան մը՝ որ կրնար իր ծանր հետեւանքները ունենալ :

Այս շարժումը առաջինը չէր , ու չէր ախտատանար վերջինը ըլլալու :

* * *

Առտու մը՝ բաւական հոծ բազմութիւն մը հաւաքուած էր հանդարտ , սիրուն թաղին մէկ կողմը՝ ուր Մանկասար աղային խանութը կը գտնուէր : Խիստ դէմքով երկայնահասակ մարդ մը՝ կը պոռչտար շարունակ , հազար ու մէկ շարժումներ ընելով , որոնցմէ յայտնի էր որ մարդը կատակի չէր գար եւ որոնցմէ կըրնար ալ կռուփներու տարափ մը ծնիլ . Խանութին տիրոջը եւ պոռչտող մարդուն միջեւ բանակութիւն մը տեղի կ'ունենար , ամէնէն խիստ բանակութեանէն մէկը , ու թաղին մարդիկը կը միջամտէին երկու կողմին ալ խօսք հասկըցնելու անպտուղ ճիգով մը :

Մանկասար աղա իր ընկած տան քոնթրաթին վրայ զմեղիի քերթուկ մըն էր ըրեր՝ պարզապէս ամսական մը կլլելու համար , ու մարդը՝ որ տանտիրոջ հաւաքէն էր , Աստուածն ու սատանան իրար խառնելով կատարուած խաբեքայութիւնը կը պատմէր թաղին մարդոցը : Ու կը բարկանար մանաւանդ , տեսնելով որ դէմինը կ'ուրանար շարունակ , եւ լպիրջ աներեսութեամբ մը , ստախոս ալ կ'ըսէր իրեն :

Մինչեւ այդ տեղերը , մինչեւ այդ ստորնացուցիչ միջոցներուն , մինչեւ այդ գոհիկ խարդաւանքին գացած էր մարդուկը , անկարելի ու անվերջանալի նիւթական հոգեվարքին տապալուածներուն մէջ , թաղեցիներէն շատերը բաւականէն աւելի պատճառներ ունէին պոռչտող մարդուն հաւատալու : Դէ՛ շարժ մըն ալ չէր երեւար ան .

— Մարդ ենք , ամէնուս ալ դիտուն կրնայ գալ ասանկ բան մը , ըսած էր միշտակ գանձուած ատենին . թերեւս զրամական նեղութիւն մը քեզ զլխէ հանած ու բռնադատած է ատիկա ընելու . բայց ինչ որ է , ջուրին պէս յստակ բան մըն է ասիկա եւ պարտաւոր տեղը կ'ուրանաս . ես ձայն չեմ հաներ , տուր սա

ամսականը , թէ չէ գրպանէս պիտի երթայ :

Բայց Մանկասար աղա ուրացած էր շա-
րունակ ու բանակութիւնը ծագած էր՝ խանութ-
թին առաջըը ժողովելով մաս մը թաղեցիկներ՝
որոնք հիմա ի զուր կը ջանային հաշտարարի
դեր մը կատարել : Ու վախ կար որ ծեծկուռք
մը սկսեր երկուքին միջեւ , եթէ երբեք ա-
նիմաստ , այլանդակ մարդուկը վերջ մը չը
դնէր իր ապուշ յամառութեան եւ հաւաքի-
չին պահանջը չտար՝ միշտ ուրանալով սակայն
իրեն վերադարձածը :

* * *

Ան իրիկունը Մանկասար աղա երկնցած
էր տանը ոնեհակին մէջ՝ հասարակ տպածո-
յով մը ծածկուած բազմոցին վրայ , ու գը-
լուխը բաց պատուհանին տուած , մաքուր
հաշիւներով զբաղած էր : Առջի օրը նոյն ա-
միսը լրացած էր եւ խանութին հաշուեկշիռը
ձակատադրային բաց մը ցուցուցած էր նորէն :
Կը խոկար խեղճ մարդը յուսահատի դէմքով
մը՝ որուն վրայ դժուար չէր մարտնչելու հա-
մար ամէն միջոցի դիմելու փափաք մը կարգաւ :

Արդարեւ , դիմացուելիք ալ բան չէր
այդ օրըստօրէական անկումը՝ որ երթալով
մեծ համեմատութիւններ կը ստանար : Իր
գործին աղտոտ միջոցները գործադրել դիտել
լիովին . ու կը զայրանար առեւտուրին ձա-
խորդ գնացքին վրայ , որովհետեւ գիտել թէ
ամէն բանէ աւելի այդ աղտոտ միջոցները
կրնային ո՛ր եւ չաջողութեան մը նպաստել :
Յետոյ ուժ կու տար աէքլամին , ուժ կու-
տար ինքնագովութեան , ու միշտ անդունդը
աւելի լայն , աւելի արհաւիրտ կը բացուէր
իր առջին :

Անկումը անխուսափելի պիտի ըլլար ան-
շուշտ . այս մտածումը կը կատգեցնէր զինքը
եւ տարօրինակ վայրագութեամբ մը ձեռքը կը
խիլէր կիսովին լեւկ ճակտին : Ամէնէն փոքր
շարժումներն անգամ միեւնոյն կատաղի թափը
ստացած էին եւ իր այդ վիճակին մէջ ինքը
կը նմանէր վտանգաւոր , չար , խժողժ գա-
ղանի մը՝ որուն ստամոքսին մէջ խայթող մե-
ղու մը սպրդած ըլլար : Ու խոկանքը՝ այն
լլատիչ , յուսահատական խոկանքը , միշտ
պարուրած էր զինքը իր ալքերով , ու խեղճ

մարդուն միտքը ուրիշ զբաղում մը չէր կըր-
նար գտնել , հոգեկան ճնշող թախիծը գէթ
քիչ մը ատեն վանել կարենալու համար :

Յանկարծ ընդմիջուեցաւ իր մտածումնե-
րուն մէջ :

Դուռը բացուեցաւ ուժգնութեամբ , եւ
աղտոտ վրայ գլխով տղայ մը՝ մէկ ձեռքը
աշուքներուն՝ ու միւսով ալ կարկանդակ մը
բռնած , ներս մտաւ լալով :

— Հայրի՛կ , ըն՛ը , ըն՛ը , ըն՛ը . . . մայ-
րիկը ինծի քիչ պողպատ տուաւ , ըն՛ը , ըն՛ը ,
ըն՛ը . . . :

Մանկասար աղա իր խոկմունքին մէջ
ընդմիջուած ըլլալուն համար արդէն իսկ զայ-
րացած , բարկութեան աւելի մեծ խթան մը
տեսաւ աղուն խօսքերուն մէջ : Ի՛նչ , ինքը
կորուստ ունենար , գրպանէն վրայ տար շա-
րունակ , եւ անոնք իրենց ստամոքսը մտա-
ծէ ի՛ ի՛ ի՛ն . . . : Օ՛հ , ատոր չպիտի կըր-
նար դիմանալ . ընտանիքին ստամոքսը պէտք
էր կապուած ըլլար իր շահուն հետ . ան ամ-
սուն որ կորուստ ունենար , պէտք էր զեղ-
չել տանը ուտեստին մէկ մասը , քիչ շատ
այդ միջոցով հաւասարակշռութիւնը պահել
կարենալու համար : Ու կը կատգէր որ կինը
իր գործերուն վիճակը գիտնալով հանդերձ ,
ալիւր վատներ էր տղոցը կարկանդակ շինե-
լով , մինչդեռ անոնք կրնային չոր հացի շեր-
տով մըն ալ կշտանալ :

Տղուն լացը կը շարունակուէր ա՛լ աւելի
անտանելի կերպով :

— Ըն՛ը , ըն՛ը . . . , հայրի՛կ , քիւէրին
մէջ , ըն՛ը . . . շատ կայ տէ , ըն՛ը , ըն՛ը . . .
ինծի չի կայ կ'ըսէ կոր , ըն՛ը , ըն՛ը . . . մայ,
ըն՛ը , ըն՛ը , ըն՛ը . . . :

Օ՛հ , ալ չափը անցած էր . այդքանն
իսկ շատ էր մարդուկը բոլորովին գլխէ հա-
նելու համար . խոշոր , անձեւ , այլանդակ
մարմինը ալապուճուելի մը պէս վեր թռաւ
բազմոցէն եւ մտաւ ձեռք մը ուժգնութեամբ
իջաւ աղուն յետոյքին վրայ :

— Շունչանորդիներ , փօրերնիդ կուշտ ,
. . . երնիդ կուշտ , պողպատնի՛դ էր պակաս ,
հա՛ . . . :

Ու բռնա՛ֆ , հատ մըն ալ իջաւ աղուն
ծոծրակին եւ թողուց որ վազելով դուրս

փախչի խեղճը , ա'լ աւելի լացը սաստկացուցած :

Յետոյ ինքն ալ ուժասպառ ինկաւ բաղմոցին վրայ , աչքերը միշտ պատուհանին :

Արեւը մարը մտած էր կիսովին եւ մայրամուտքի երկինքին վրայ հիանալի վերջալոյս մը նկարուած էր մէկ ծայրէն միւսը : Կանանչ , դեղին ու բոսոր ելեւէջներ երկարած էին թանձր լուրթի մը վրայ եւ հեռուն ամպի ճերմակ ծուէններ գանգուր գանգուր կու գային կառչիլ անոնց , թեթեւ փետուրներու պէս՝ զորս հովը հոս հոն կը փակցնէ : Եւ այդ սիրուն հաւաքականութենէն՝ ցոլքը սաստիկ կը խուժէր մինչեւ աչք առնելու աստիճան՝ ու դժուար չէր գուշակել թէ սքանչելի օդ մը պիտի ընէր յաջորդ առտուն :

Մանկասար աղա , միշտ իր մտածումներուն մէջ թաղուած ըլլալուն հակառակ , նայուածքին բովանդակ թափովը գրկած էր երկինքին այդ տեսարանը : Արեւին մարմուքը շատ կը նմանէր իր դործերուն ընթացքին . ա՛ն ալ այդպէս աստիճանաբար շիջած էր : Բայց արեւը իր արշալոյսը կը խոստանար յաջորդ օրուան համար . վերջալոյսէն ետքը աւելի գեղեցիկ , աւելի ուժով եւ աւելի հիացուցիչ վերազարթնում մը պիտի ունենար անիկա , մինչդեռ իր խանութը , այդ աղտի , ցեխի , նեխութեան ընդունարանը , որ ինքն ալ վերջալոյսի մը տապալուքին մէջ կը զրոնուէր , առանց արշալոյս մը ունենալու յոյսին պիտի մարէր իրիկուան մէկը , ցեցի մը յիշատակը միայն թողլով ասպսրէզին մէջ :

ԽԶՈՒԱԾ ԼՈՒՐԵՐ ՈՒ ԹՐԹՈՒՆ ԹԵԼԵՐ

(ԿԱՐՑ Մակարա)

ՅԱՐԲԱԼՈՒԾՈՒԾ



ԱՏՃԱՌՆԵՐՈՒ անգութ հոսանք մը ուժգին
Որոշադրել կուգայ մեր կեանքը՝ ամբողջ ,
Բաղձանքները , կամքն ալ , — ասեղ մը դողդոջ .
Յուզմամբ կ'իյնան մագնիսական հոսանքին :

Ի՞նչ է կեանքը . — մշուշապատ սե'ւ րազին
Հակասութիւնք՝ իր աստուածներն ինքնակոջ ,
Զորքս կ'օրհնեն յանկերգներով տրտմագոյ՝
Սարսուռները մեր սկեպտիկ շրջրուքին :

Եւ ըզգացմանց յաջորդութեամբ հակոտնեայ ,
Կը դեղելին մըտածումներն անխընայ :
Հոգին կ'ըլլայ պղտոր լըճակ մ'ալեկոծ :

Յարաջարջար , մըշտատատան , յեղեղուկ ,
Հոգին կ'ըլլայ հովի շունջ մը խուսափուկ ,
Հոգին անգոյն , տարտամ հոգին վըշտախոց :

94 Փետրվ. 10

ՎԵՐՉԱԼՈՅՍԻ ՊԱՀՈՒՆ



ԲԻԿՈՒՆ մը՝ աշնան տըխուր :
Գիւղէն հեռու , Երբքին վըրայ :
Ամպերուն տակ ոսկեփրփուր

Անուշ հով մը կը սարսըռայ :
Մինջ կը դեղնի արևն հատած ,
— Մութ գիշերին՝ լոյս-առնկիրայ :

Դաշտերուն մէջ համատարած
Հողագործներ դեռ կը հերկեն
Լայն փորն երկրին՝ կակուղ ու քայ :

Աղօտ ցուքեր գորշ երկինքէն
Կը ցանցընուին դաշտերուն մէջ
Ու մըշուշը կը ծակծրկեն :

Եւ կեանքի մը պէս վաղաշէջ ,
Կը մարմըրի արևն հատած ,
Լոյս-հոգիովն իր պաղ ու գէջ :

Ու շըղարշներ , ցուրտ , սարսըռուն ,
Կը հագցընեն սեւեր երկրին ,
Սուգի սևերն ըստուերներուն :

Մինջ պատկերներն ալ կը մարին
Երագներու պէս մըշուշոտ ,
Այս ոսկեգօծ ոգեւարին՝
Հուսկ ցուքերուն տակ անըրջոտ :

Սեպտ. 8

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ԳԱԻԱՌԱՅԻ ԳՐԱԳԷՏԸ

ՅՈՎ. ԳԱԶԱՆՃԵԱՆ



ՈՒՏ բնիկ տարրերէ բաղկացող ճշմարտագէտ հայ գրականութեան մը՝ իր ամէն ճիւղերով՝ մշակման կարեւորութիւնը օրէ օր կը շեշտուի եւ այս տեսակէտով շատ բան կը սպասուի գաւառացի գրագէտներէն ուրոնք ամէնէն աւելի ունին այդ բնիկ տարրերը իրենց ձեռքին տակ : Բայց օր մըն ալ կը հարցնե՞ն թէ գաւառացի գրագէտը կ'ապրի՞ ա՞յն նպաստաւոր պայմաններուն մէջ ուրոնք հարկաւոր են արտադրելու ինչ որ կ'աւելնկալուի իրմէ : Յօժարութիւն , փափաք , պատրաստակամութիւն չէ որ կը պակսի գաւառացի գրագէտին քով , ո՛չ ալ աշխատելու տրամադրութիւն . գործին դժուարութիւնը չէ որ զինք կը կասեցնէ , ո՛չ ալ իր կարողութիւններուն վրայ անվստահութիւնը : Ընդհակառակը թերեւս ան չափէն իսկ աւելի անձնավստահ՝ ինք իր ուժերուն վրայ , հրահրուած՝ խանդավառ հաւատքէ մը , անհուն եւ անհամբեր փափաք մը կը տածէ ինքզինքը տալու այն բոլոր աշխատութիւններուն եւ ուսումնասիրութիւններուն որոնցմով պիտի կառուցուի հայ գաւառական գրականութեան հոյակապ շէնքը . բայց եթէ դեռ կը յապաղի իր սկսելիք գործին մէջ , յանցանքը իրը չէ ապահովագէտ : Գլխովին իր կամքէն անկախ՝ արտաքին պարագաներ են . ամէնքն ալ գրելիք հաւասարագէտ ծնունդ միջավայրի պայմաններու , որոնք գաւառացի երիտասարդ գրագէտին խանդը կը ջլատեն :

Տարակոյս չկայ որ ճշմարիտ գրագէտ ըլլալու եւ գրականութիւն հիմնելու համար՝ գաւառացի գրողին չի բաւեր միայն օժտուած ըլլալ արեւելեան արեւոտ ու պատկերոտ երեւակայութեամբ մը ու յաջողած՝ իրեն համար ստեղծելու բնատրոյ ոճ մը , զինք չըջապատող բնութեան նման անարուեստօրէն նախընտրու ու բարբարիկ , ո՛չ ալ այդ բանին աստիճանէ մը աւելի կրնան նպաստել այդ նոյն գաւառական կոյս բնութեան բովանդակ բանաստեղծական կողմերը՝ իրենց ազդած բոլոր հիպոթրիքներովն ու ներշնչումներովը , ո՛չ ալ գաւառաբարբառներու ճոխ գանձերը զորս ան — գաւառացի գրագէտը — իր տրամադրութեան տակ ունի եւ ա՛յնքան սիրուն կերպով գիտէ շահագործել , եւ ո՛չ իսկ մեր բնիկ բարբերը , մեր հոգին՝ իր ամէն փուլերուն մէջ ճանչնալու եւ ուսումնասիրելու մասին վայելած զիւրութիւնները՝ չնորհիւ իր ապրելուն ա՛յն պիտի հայ տարրերու մէջ՝ որոնք , ամէնէն աւելի կոյս են եւ զերծ՝ խորթացումէ . . . Զէ՛ , ասոնց հետ մէկտեղ ան դեռ պէտք ունի մտքի բազմակողմանի ու լայն զարգացման մը որպէս զի գաղափարներու եւ հրմտութեան անձուկ սահմանի մը մէջ բանտուած չմնայ եւ կարող ըլլայ գրական ամէն սեռերն ալ մշակել հաւասար յաջողակութեամբ ու ձեռնհասութեամբ , համաձայն արդի պահանջներուն ու զիւրութեան նորագոյն հայեացքներուն :

Պէտք է խոստովանիլ թէ մեր գաւառացի գրողները դեռ այս աստիճան պատրաստուած չեն , անոր համար որ չունին իրենց ձեռքին տակ հարկ եղած բաւարար միջոցներն ու զիւրութիւնները մտաւորական այդ աստիճան զարգացում մը ձեռք բերելու հա-

մար, որովհետեւ առ հասարակ շատ նախնական կրթութիւն մը առած են եւ եթէ ոմանք իրենց յամառ ինքնաշխատութեան շնորհիւ մէկ-երկու եւրոպական լեզուի տիրացած եւ քիչ ու շատ հմտութիւն մթերած են այս ու այն ճիւղերու մէջ, դարձեալ պէտք ունին հետեւելու եւրոպական առօրեայ գրական ու գիտական շարժման, բան մը սակայն որ տեղի չունենար։ Ասոր համար գաւառացի գրողները ստիպուած է իր մտաւորական սրնունդը փնտռել Պոլսոյ վտիտ լրագրութեան եւ քանի մը հինցած գիրքերու մէջ միայն, նոյն իսկ շատ անգամ իր ընտրած ճիւղին վերաբերեալ կարեւոր հրատարակութիւնները գէթ ձեռք անցնելու դժուարութիւնը կրելով։ հրատարակութիւններ՝ որոնք կարեւոր են իր գաղափարները ընդլայնելու, զինք վերահասու ընելու համար ինչ բաներու՝ որ կան գրուած իր նիւթին վրայով, ու նաեւ իրեն առաջնորդ ծառայելու՝ իր աշխատութիւններուն եւ ուսումնաւորութիւններուն։ Ահա այս առաջին պատճառ մըն է որ գաւառացի գրագէտին մտաւորական զարգացումը չափաւոր ու սահմանափակ կացութեան մը մէջ պահելով՝ յաւէտ անընդունակ կ'ընէ զինք լուրջ ու լազմակողմանի աշխատութիւններու եւ իր մտքին ուժը վատնել կուտայ հարեւանցի ու կցկտուր գրական արտադրութիւններու մէջ որոնք մեծ բան մը չեն արժեք ապահովապէս։

Սակայն գաւառացի գրագէտը եթէ ունենայ իսկ զարգացման այս ամէն զիւրութիւնները որոնցմէ առ այժմ զուրկ է, կամ եթէ գտնուին մէկ քանիներ՝ որոնք տաժանելի աշխատութիւններով գրական այս կամ այն ճիւղին մէջ գոհացուցիչ ձեռնհասութիւն մը ձեռք բերած են, դարձեալ կարելի է իրենցմէ յուսալ կարեւոր ու աշխատուած երկարութիւններ, որովհետեւ գաւառացի գրողները չի կրնար իրեն բացարձակ զբաղում ընել գրական աշխատութիւնը։ Գրականութիւնը եթէ Պոլսոյ մէջ իսկ դեռ ապրուստի շնորհով միջոց մը չէ հայ գրագէտին համար, գաւառի մէջ ցամաք հաց մը ճարելու անգամ չի ծառայեր, ամէնէն կոշտ դործաւորութիւնն անգամ չարժեքով։ Գաւառի բո-

լոր գրագէտներն ալ պարզապէս իբրեւ amateur՝ արուեստի սիրոյն համար է որ կը գրեն, անոր մէջ գտնելով ներքին ձգտում մը։ Գոհացնելու հաճոյքը որ սակայն փոր կշտացընելու հաճոյքն ալ մէկտեղ չի հայթայթեր դժբախտաբար։ Հետեւաբար անոնք գրելէ առհասարակ ստիպուած են միայն իրենց պարագայ ժամերը նուիրելու գրականութեան, ժամեր՝ որոնք շատ ալ չեն ըլլար։ Ասոնց մէջ ամենէն բարեբախտները համարելու ենք վարժապետները — եւ արդէն գաւառացի գրողներուն մեծ մասը այս գասակարգէն է — որոնք թերեւս քիչ շատ ժամանակ կարենան գտնել գրել-կարդալու։ Իսկ անոնք որ զիրենք առտուրէն մինչեւ իրիկուն տեղ մը գամուղ եւ զբաղեցնող գործերու մէջ են, անանկները ո՛չ աչք մը պիտի կրնային նետել գրքի կամ թերթի վրայ, ո՛չ ալ տող մը բան թղթի վրայ՝ եթէ իրենց քնոյ կամ հանգստի անհրաժեշտ ժամերէն չգողնային... Գաւառացի գրագէտը տեսնէիք ի՞նչիւր չափի կրնար արտադրել՝ եթէ ապրուստի հոգէն զերծ ըլլար, կամ գրականութիւնը սանկ իրեն գոնէ կրճելու չոր հաց մը մատակարարէր։ Իր հիմակուան պայմաններուն, ան չի կրնար ձեռնարկել ամբողջական աշխատութեան մը որ մնայուն գրական կամ գիտական արժէք մը ունենար։ Ան հազիւ թէ իր տրամադրելի ժամանակը կը բաւեցնէ առօրեայ ընթերցումներու եւ լրագրներուն ամիսը մէկ-երկու յօդուած հասցնելու, որոնց մէջ կը գտնէ իր գաւառացի գրագէտի պզտիկ փառասիրութեան պզտիկ գոհացումը, որ սակայն առժամեայ է ու չա՛տ ալ վաղանցուկ, թերթին օրուան կամ շաբթուան մը կեանքին չափ միայն տեւելու սահմանուած։ Ես խորհուրդ պիտի տայի գաւառացի գրողներուն որ իրենց տրամադրելի ա՛յնքան քիչ ժամանակը փոխանակ կտոր-փրթում լրագրական յօդուածներու եւ թղթակցութիւններու քմահաճոյքին մէջ հատցնելու, ամէն մէկը իր ընդունակութեան եւ նախասիրութեան համաձայն նիւթ մը ընտրէր եւ անոր ուսումնասիրութեանը ձեռնարկէր լրջօրէն, մէկդի թողլով գրական ամէն քմահաճ զբաղում, եւ իր բովանդակ տրամադրելի ժամանակն ու

մաքի կորովը միմիայն անոր նուիրելով՝ յաջողէ՛ր հոգ չէ թէ երկար ժամանակի մէջ, արտագրել ամբողջական գործ մը որ բան մը արժէր գաւառի գրականութեան տեսակէտով եւ կեանք ունենար՝ տեւական վառք մըն ալ չինելով իր հեղինակին ։ Որչափ ատեն որ գաւառի մեր գրողները գէթ այս գաղափարը չընդգրկեն՝ անկարելի է յուսալ որ ներկայ պայմաններու մէջ անոնք ժամանակ եւ պատեհութիւն գտնեն իրենք գիրենք տալու լուրջ աշխատութեանց ալ եւ արտադրեն կարեւոր, documental գործ մը, ըլլա՛յ ազգագրական կամ լեզուաբանական, ըլլա՛յ վիպական, թատերգական կամ բանաստեղծական ։

Բայց դեռ ամէնքը ասոնք չեն, դժուարութիւնները որոնք գաւառացի գրողը կ'արգիլեն արտադրելէ ինչ որ կը սպասուի իրմէ ։ Դեռ կան ուրիշ տեղական պայմաններ եւ շատ ուրիշ աննշան պարագաներ ալ որոնք նոյնքան ջլատող, վնասեցնող հանգամանք մը ունին գաւառացի գրողէտին համար ։ Զորօրինակ՝ գաւառացի գրողէտը չըջապատուած անուս տարրերէ, դատապարտուած անոնց հետ առօրեայ չլիման մէջ ապրելու, իր շուրջը, իր քովը բան մը չի գտնար որ իր գրական խանդը քաջալերելու, հրահրելու բնութիւնը ունենայ ։ Ո՛չ ոք զինքը կը հասկնայ, եւ ո՛չ մէկու կողմէ թո՛ղ զիւրութիւն մը ընծայուիլ իր աշխատութեանց՝ սրտի հաճելի գալիք բարոյական քննադատութիւն կամ քաջալեր մը անգամ չի վայելեր ։ Ընդհակառակն ամէն ոք կ'արհամարհէ գրականութիւնն ու գրական ասպարէզը եւ արգահատալից զարմանքով մը կը նայի գաւառացի գրողին աշխատութիւններուն վրայ, չկրնալով ըմբռնել թէ ինչպէ՛ս մարդ կրնայ ա՛յդ աստիճան միտք եւ ուղիղ նահատել ա՛յնպիսի բաներու համար՝ որոնք փոր չեն կշտացներ ։ Գրողէտներու համար ի՛նչքան հրահանգիչ, օգտակար ի՛նչքան հաճելի, ոգեւորիչ է ունենալ ընկերական գէթ պզտիկ շրջանակ մը զիրար հասկըցող գրական մարդոց, նոյնքան յուսահատական է որ գաւառացի գրողը շատ անգամ նոյն խոկ մարդ մը չունի որուն հետ կարող ըլլայ երկու խօսք կամ կարծիք փոխանակել գրական նիւթերու վրայ ։ Տարակոյս չկայ որ

այս կարգի գրական խօսակցութիւններ եւ կարծեաց փոխանակութիւններ փոխադարձաբար մաքերը կը լուսաւորեն, վնասող ուժերը կ'ոգեւորեն, մարող խանդերը կը հրահրեն, որով մեծապէս կը նպաստեն գրական գործունէութեան ։ Եւ սակայն գաւառացի գրողը գրելէ գլխովին գուրկ է այս բարեպատեհութեան ։ Պէտք է խոստովանիլ թէ այս ամէնը իրենց յոռի եւ ջլատող ազդեցութիւնը ունին գաւառացի գրողին հոգեկան տրամադրութիւններուն վրայ եւ ազդեցիկ են վերջապէս որ անոր աշխոյժը վառ պահելու բնութիւնը չունին ։ Ասոնք եւ ուրիշ պատճառներ ալ զորս կամաւ չափաւ մոռնայի, բնական են ապացուցանելու թէ գաւառացի գրողէտը հիմկուհիմա ո՛չ պէտք եղած պատ. բնատուրութիւն ունի, ո՛չ ժամանակը, եւ ո՛չ ալ արտաքին նպաստաւոր միջավայրը որոնք կարեւոր են գաւառական բազմակողմանի գրականութիւն մը հիմնելու, իր ամէն տեղի վրա ։

* * *

Գաւառացի գրողէտին գիրքը շատ հետաքրքրական ու զուարճալի է ուրիշ քանի մը տեսակէտներով ալ ։ Ան շատ տեղ դեռ ժողովրդեան աչքին հին պատկերներն է, չնայելով որ այդ type-ը գաւառներէն իսկ անհետանալու վրայ է հետզհետէ ։ Հետեւաբար ժողովուրդը անկէ կը սպասէ այն ամէն բաները զորս իր հին պատուելիներէն կը ստանար, զորօրինակ խորհուրդ մը որեւէ կնճառ խնդրոյ մը առթիւ, ոտանաւոր տապանադիր մը մեռնող ջոջի մը գերեզմանին վրայ, տափակուկ պայմանագրական ճառ մը հանդէսի մը մէջ, բարեւագիր մը՝ հեռու ազդեցական կամ բարեկամի մը ուղղեալ կամ հրաւիրագրի օրինակ մը՝ հարսնիքի առթիւ, եւլն ։ Հին պատուելիները ամենայն սիրով կը կատարէին այս ծառայութիւնները որ իրենց կերպ մը հասարակաց խորհրդատուի կամ գրագրի հանգամանքը կուտար ։

Ժողովուրդը հին պատուելիներու այս հաճոյակատարութեան վարժուած՝ ամէն անգամ որ պէտք ունենայ՝ կը շարունակէ դիմել իր նոր պատուելիներուն, կամ վերջապէս գրիչ շարժելու մէջ համբաւ ունեցող որ եւ է

մէկու որ կրնայ ըլլալ նաեւ գաւառացի գրա-
գէտն ալ, իբրեւ թէ հասարակաց գրագիր մը
ըլլար ան :

Այս տեսակ դիմումներու ատեն հարկա-
դրուած ես նախ երկար բարակ մնաւալ մտիկ
ընել եւ յետոյ գրել բաներ՝ զոր շատ ան-
գամ ըմբռնած չես :

Նմանօրինակ ուրիշ փորձանքներ ալ ան-
պակաս են գաւառացի գրողին գլխուն զորս
հարկ չեմ համարեր մէկիկ մէկիկ թուել : Կը
տեսնուի ուրեմն թէ գրագէտը՝ գաւառներու
մէջ, հաճելի ու նախանձելի դիրք մը չունի
բնաւ, եւ նոյն իսկ ասանկ պզտիկ անհան-
գստութիւնները՝ միանալով ուրիշ աւելի կա-
րեւոր պատճառներու հետ, եթէ գաւառացի
գրագէտը վհատեցնեն ու զայն մղեն ընդմիշտ
հրաժեշտ տալու գրչին ու թղթին, ես չեմ
մեղադրեր . . . : Բայց ո՛չ, ան հաւատք ունի
իր դերին ու իր գործին վրայ, ան անհուն
սիրով ու գուրգուրանքով մը փարած է իր
գրչին որ հաճոյքներուն ամէնէն գերագոյնը

կը հայթայթէ իրեն : Ուրեմն պարագան է
երբ ըսենք գաւառացի գրագէտին հա-
մար թէ անիկա « քարը ճեղքելով ու մէջէն
ծլելով . . . մամուռին նման անջրդի ժայռէն
իր անունդը քաղելով » պիտի հետզհետէ ուռ-
ճանայ, զօրանայ, մինչեւ կազմելու չափ
կայտառ գրականութիւն մը գաւառական որ՝
պէտք եղած ներքին ուժը պիտի ունենայ
դիմադրելու « կեդրոնական տոհմային եւ օ-
տար համադրային գրականութեանց ազդե-
ցութեան », ընդ միշտ մերժելով անոնց օտա-
րոտի պատուաստը : Եւ գաւառական գրա-
կանութեան այդ ուժը զօրաւոր պիտի ըլլայ,
անդիմադրելի կերպով, զօրաւոր անտառին մէջ
աճող անպատուաստ վայրի վեհապանծ ծառին
նման վայրենօրէն զօրաւոր, անոր համար որ
եկամուտ պիտի չըլլայ, գերադանցապէս իրը
պիտի ըլլայ, զինք արտադրող ցեղին մկա-
նուռքէն, ջիւղերէն, հոգիէն բղխած ինքնա-
սեպական կեանքոտ ուժ մը :

Ո Ւ Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ՀԷՆՐԻԻՔ ԻՊՍԵՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԸ

ՏԻԿԻՆ ՀԷԼԷՆԷ ԱԼՎԻՆԿ, գեղապետ եւ երեսփոխան Ալվինկի այրին
ՕՍՎԱԼՏ ԱԼՎԻՆԿ, նկարիչ, իր որդին
ԲԱՍԹԻՕՈՒ ՄԱՆՏԵՐՍ
ԱՏԱՂՁԱԳՈՐԾ ԷՆԿՍՊՐԱՆԴ
ՌԷԿԻՆԷ ԷՆԿՍՊՐԱՆԴ, օգնական աղջիկ՝ տիկին Ալվինկի քով :

Գործողութիւնը կը կատարուի Արեւմտեան Նորվեկիա, Տիկին Ալվինկի սեփականութիւնը եղող
մեծ ագարակի մը մէջ :

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒՄ

Պարտէզին վրայ նայող մեծկակ սենեակ մը, դուռ մը,
ձախ կողմը եւ երկու դուռ ալ աջ կողմը : Սենեակին մէջ
մէջտեղը կ'որ սեղան մը, շուրջը աթոռներով . . . սեղանին
վրայ զիրքեր, հոնդէսներ եւ օրամերձեր : Սենեակին ճա-
կատը, դէպ ի ձախ պատուհան մը, առջեւը պզտիկ բազ-
մոցով եւ բազմոցին քովն ալ կարի մեքենայ մը : Սենեա-

կին վարի անկիւնը ծաղիկներու բազմաթիւ թաղանթեր,
որոնք բուն սենեակէն ապակիէ որմով մը զատուելով կը
ձեւացնեն նեղկուկ ծաղկանոց մը : Ծաղկանոցին աջ կողմը
դուռ մը, ուրկէ կարելի է պարտէզ իջնել : Ծաղկանոցի
ապակիներուն մէջ կարելի է տեսնել հեռուն տարածուող
գիւղային դաշտանկարները, որոնք հաւասար կերպով իջ-
նող անձրեւի մը ետին կ'իսկոյն քողարկուած կը թուին :

Ատաղձագործ էնկսողանդ վերը պարտէզին դրան առջեւ

կեցած է. ձախ ոտքով կը կաղայ քիչ մը, ասոր համար նոյն ոտքը կօշիկին նրբանը հաստ փայտի կտորով մըն է. Ռէկինէ, ձեռքը պարսպ ծաղկեսրկիչով չի ձգեր իրեն որ մօտենայ :

Ռէկինէ (չապառած յայնձ) . Ի՞նչ կ'ուզես, տեղէդ մ'երերար, անձրեւ կուգայ վրադ, էնկադրանդ . Ի՞նչ կ'ըլլայ . Աստուծոյ օրհնած անձրեւն է, զաւակս :

Ռէկինէ . Է՛, կ'ուզէ նէ Սատանային ա-նիծածը ըլլայ :

Էնկադրանդ . Ինչե՛ր կ'ըսես, Ռէկինէ, (կաշալէ երէտ +այլ առաջ, սէնտէնէն Ներսիսեան) Ի՞նչ կ'ըսէի . . . հա՛ . . .

Ռէկինէ . Պէ մա՛րդ, ոտքդ ատանկ գետինը մի զարներ . երիտասարդ պարօնը կը քնանայ վերը :

Էնկադրանդ . Ա՛ս ատեն պառկեր է կը քնանա՞յ, կէս օր եղեր է :

Ռէկինէ . Քենէ չեն հարցներ :

Էնկադրանդ . Էրէկ իրիկուն նորէն խընջօքի մըն էի, աղջիկ :

Ռէկինէ . Գիտեմ, քու միշտ ըրած բանդ է :

Էնկադրանդ . Ի՞նչ կրնաս ընել, զաւակս, մարդիկ տկար են :

Ռէկինէ . Այո՛, իրաւ տկար ենք ամէնքս ալ :

Էնկադրանդ եւ փորձութիւնները այնքան շատ են աշխարհիս մէջ, կը տեսնե՞ս . բայց նորէն . . . Աստուած ալ գիտէ . . . որ այս առաւել կանուխ գործիս զըլուխն էի :

Ռէկինէ . Աղէկ, հասկցա՛յ, հասկցայ, նայէ որ վայրկեան մը առաջ դուրս ելլես ասկից : Ձեմ ուզեր հոս մնալ եւ քեզի հետ ժամադրութիւն ունենալ :

Էնկադրանդ . Ի՞նչ չես ուզեր ունենալ :

Ռէկինէ . Ձեմ ուզեր որ որ եւ է մէկը այստեղ քեզի պատահի. ուրեմն գործիդ դնա : Էնկադրանդ . (Երէտ +այլ առաջ մօտէն) Աստուած ալ թող վկայ ըլլայ, որ մինչեւ որ քեզի հետ չխօսիմ չեմ երթար . . . Այսօր կէս օրէն վերջը սա վարի զըպրատունին մէջ գործս կը լմնցնեմ, ու յետոյ աս իրիկուն շողենաւ նստելուս պէս զէպլքաղաք տուն կ'երթամ :

Ռէկինէ . (Քիչէն ասէն) Բարի ճանապարհ :

Էնկադրանդ . Ապրի՛ս զաւակս . . . դիտե՛ս, վաղը անկլեանոցը հանդէսներով պիտի բացուի, եւ հաւանականաբար ամէն մարդ աղէկ մը պիտի կոնծէ, եւ ոչ մէկը, մեղաւորիս, Եաքօպ Էնկադրանդին ետեւէն թող ըսէ թէ անիկայ փորձութիւններու չի կրնար դէմ դնել :

Ռէկինէ . Օ՛ .

Էնկադրանդ . Հրաման ես, քանի որ վաղը կարգ մը քիպար մարդիկ պիտի հաւաքուին, Գիտե՛ս, Բասթօր Մանտըրսն ալ քաղաքէն պիտի դայ :

Ռէկինէ . Անիկա այսօրուէն կուգայ արդէն :

Էնկադրանդ . Տեսա՞ր . Ուրեմն դուն ալ հասկնալու ես հիմա որ անիկա իրաւունք չունի ետեւէս բան մը ըսելու :

Ռէկինէ . Վա՛յ . գործերը այդ վիճակին մէջ են ըսել է :

Էնկադրանդ . Ո՞ր գործերը .

Ռէկինէ . (Շեշտով երեսը նայելով) Ինչո՞ւ կ'ուզես նորէն Բասթօր Մանտըրսը մօլորեցունել :

Էնկադրանդ . Ի՞նչ կ'ըսես . խեղժ ես, ի՞նչ ես, Ինչո՞ւ կ'ուզեմ եղեր Բասթօր Մանտըրսը մօլորեցնել : Բա՛ւ լիցի, անոր այդ տեսակ բան չեմ ըներ ես . . . Բայց չես գիտեր, կ'ուզէի քեզ ըսել միայն որ այս իրիկուն ես տուն կ'երթամ :

Ռէկինէ . Ինչ կ'ուզես ան ըրէ . որքան շուտ երթաս, այնքան աղէկ է :

Էնկադրանդ . Այո՛ . բայց կ'ուզեմ որ դուն ալ մէկտեղ դաս, Ռէկինէ :

Ռէկինէ . (Բերանը խոլը ճե քաշած) Մէկտեղ դա՛մ . . . ի՞նչ կ'ըսես :

Էնկադրանդ . Կ'ըսեմ որ դո՛ւն ալ ինծի հետ-միասին գաս :

Ռէկինէ . (Անբարեկամ քիչ-առաջ) Երբեք չես կրնար դիտուն տանիլ :

Էնկադրանդ . Շա՛տ աղէկ . կը տեսնե՞ք :

Ռէկինէ . Կրնաս ասպնով ըլլալ որ պիտի տեսնենք . Ե՞ս, ես որ երեսփոխան Ալվինկի տիկնոջ քով մեծցած եմ . . . Ե՞ս, ես որ գրեթէ տան աղջկան պէս եղած եմ :

ես քեզի հետ տուն դառնամ պիտի եղեր :
Ատա՞նկ խայտառակ տուն մը :

Էնկադրանդ . Ի՞նչ սատանայ է ատ փո-
րըդ մաներ է , աղջիկ . ըսել է դուն հօրդ կամ-
քին հակառակ կը վարուիս :

Ռեկիլենե . (Առանց անոր նայելու , +իլին
դա՛նկ) Քի՞չ անդամներ ըսած ես թէ ինծի հա-
մար հոգդ չէ բնաւ :

Էնկադրանդ . Հը՛ . Ի՞նչ կ'ելլայ ասկէ :

Ռեկիլենե . Դուն չէի՛ր որ անշափ ան-
գամներ կը հայհոյէիր ինծի եւ կ'ըսէիր որ
ես . . . Թո՛ւ :

Էնկադրանդ . Բնա՛ւ , բնա՛ւ . ատանկ
աղաոտ բառ մը կեանքիս մէջ չեմ ըսած :

Ռեկիլենե . Օ՛ . դեռ միտքս է ըսած բառդ :

Էնկադրանդ . Հը՛ , այո՛ . Բայց քիչ մը
խմեալ եղած ատենս էր ատիկա , եւ գիտե՛ս ,
Ռեկիլենե , թէ որքան փորձութիւններ կան
այս աշխարհիս մէջ :

Ռեկիլենե . կը սոսկամ :

Էնկադրանդ . Անկից վերջն ալ , միայն
այն ատեն ատանկ բան մը պատահած է , երբ
մայրդ այնքան ծուռ դէմք մը կը շինէր : Զա-
ւակս , այն ատեն պէտք էր որ ես ալ բան
մը ունենայի ձեզի բարկացնելու համար :
Միշտ կ'ուզէր քիպար երեւնալ , (Նժանցնելով)
« Ձգէ՛ դիս , հանգիստ ձգէ՛ դիս , էնկադրանդ ,
ես երեք տարի Ռօզէնֆոլտի մէջ , երես-
փոխան Ալվինկի } քով ծառայած եմ : »
(Կը խնայ) : Աստուած չընէ , բնաւ
չէր մոռնար , որ գնդապետը իր հոն ծառա-
յած ատեն երեսփոխան եղած էր :

Ռեկիլենե . Խեղճ մայրիկս . . . , դո՛ւն ես
անոր այսպէս շուտ մեռնելուն պաճառը :

Էնկադրանդ . (Ելած Գեղը շարժելով)
Այո՛ , անանկ է . Ամէն ատեն յանցանքը իմ
կ'ըլլայ :

Ռեկիլենե (անդէմ կը դառնայ , կէս Բարձ-
րայն) . Ա՛հ . . . յետոյ ոտքը՛ :

Էնկադրանդ . Ի՞նչ կ'ըսես , աղջիկս :

Ռեկիլենե . Pied de mouton .

Էնկադրանդ . Անգլիներէ՞ն է ատիկա :

Ռեկիլենե . Այո՛ :

Էնկադրանդ . Այո՛ , այո՛ . դուն հոս դաս
ալ առեր ես . եւ հիմա ատիկա կրնայ մեզ
օգտակար ըլլալ , Ռեկիլենե :

Ռեկիլենե (Ի՛նչ մը արեւ լուս կենալէ վերջ) .
Նպատակդ ինչ է , որ ինծի քեզի հետ քա-
ղաք տանիլ կ'ուզես կոր :

Էնկադրանդ . Տակաւին կը հարցնե՛ս . ինչ
որ հայր մը իր մէկ հատիկ զաւկէն կ'ուզէ :
Միթէ ես լքուած ու միայնակ այրի մը չեմ :

Ռեկիլենե . Օ՛ր , ատ տեսակ խօսքերով
իմ գլուխս մի տանիր . ինչո՛ւ կ'ուզես որ ես
անպատճառ հետդ քաղաք գամ :

Էնկադրանդ . Այո՛ , միայն սա չափ ը-
սեմ քեզի որ կ'ուզեմ նոր կերպով մը փորձել :

Ռեկիլենե . Դուն արդէն շատ անգամներ
փորձած ես , եւ միշտ անյաջող գացած է :

Էնկադրանդ . Այո՛ , բայց այս անգամ
դուն ալ պիտի դարմանաս , Ռեկիլենե . . . :
Սատանային խերիկին ծակը պիտի անիծեմ :

Ռեկիլենե . (Որքէ Գեղին շարժելով) : Ձգէ՛
սա՛ հայհոյանքը :

Էնկադրանդ . Լռէ՛ , լռէ՛ . աղ մասին
իրաւունք ունիս , զաւակս : Կ'ուզեմ քեզի
սաչափ մը ըսել որ , նոր անկեղանոցի շինու-
թեան երեսէն , ես կրցայ հոս աշխատելով
քիչ մը ստակ մէկդի դնել :

Ռեկիլենե . Իրա՞ւ . Նայէ՛ , ատիկա քեզի
համար բաղդ մըն է :

Էնկադրանդ . Բայց , քաղաքէն հեռու ,
այստեղը , ի՞նչ բանի համար կրնայ մարդ իր
ստակը տալ :

Ռեկիլենե . Շատ աղէկ . յետո՛յ :

Էնկադրանդ . Մտածեցի որ , ստակը
օգտակար բանի մը համար դորձածեմ . Նա-
ւորդներու համար սանկ տեսակ մը օթե-
ւան . . . :

Ռեկիլենե . Վա՛յ , աղտո՛տ .

Էնկադրանդ . Քիպար օթեւան մը . կը
հասկնա՛ս . ոչ թէ նաւաստիներու համար խո-
ռոչ մը : Ո՛չ , երկինք , սանդարամէտ թող
վկայ ըլլան . . . նաւապետներու եւ ղեկա-
վարներու եւ . . . եւ ուրիշ քիպար մարդոց
համար պիտի ըլլայ , կը հասկնա՛ս :

Ռեկիլենե . Է՛ , ես ինչ պիտի ընէի
հոն . . . :

Էնկադրանդ . Դուն միայն պիտի օգ-
նէիր , այո՛ : Միայն սանկ , ձեւի համար . սա-
տանային վրայ երդում կ'ընեմ , որ քու աշ-
խատութիւնդ դժուար բան մը չպիտի ըլլայ :

զաւակս : Միայն քու ուղած բանդ պիտի ընէիր դուն :

Ռեկիմէ . Այո՛ , հասկցայ :

Էնկադրանդ . Սակայն կարդ մը աղջիկներ ալ պիտի ըլլան օթեւանին մէջ , այս կէտը արեւին չափ պայծառ է : Որովհետեւ իրիկունները պէտք է պարերելով , երգերով եւ նման միջոցներով ժամանակը ուրախ անցնի : Հարկաւ կը հասկնաս դուն որ հոն օթեւանողները Աստուծոյ ծովերուն վրայ ճաֆօրդող նաւորդներ են : (Բայ՛ Ժ Ժօփէսլ) Խնդուծիւն պէտք չէ , Ռէկիմէ , եւ քու իսկ երջանութեանդ արգելք մի՛ ըլլար : Աս տեղը , քաղաքէն հեռու , ո՛ւր պիտի երթայ քու վերջդ : Քեզի որ եւ է օգուտ մը ունի՞ եթէ տիկին Ալվինկ քեզ այնքան բաներ սորվեցընել տուած է . Կ'իմանամ որ նոր անկեւանոցին մէջ տղաքներուն վրայ հսկելու պաշտօն մը պիտի ստանաս եղէր : Աս բանը կը վայելէ՞ քեզի :

Իրա՞ւ , կը փափաքի՞ս այնքան ադ աղտոտ արարածներուն համար այնքան չարաչար աշխատիլ :

Ռեկիմէ . Ո՛չ . եթէ ուղածիս պէս երթար ամէն բան , այն ատեն . . . կրնայ ըլլալ , կրնայ ըլլալ :

Էնկադրանդ . Ի՞նչ կրնայ ըլլալ :

Ռեկիմէ . Ատիկա քեզ չի պատկանիր . . . Շատ ստակ խնայեցիր :

Էնկադրանդ . Ամէնքը իրարու վրայ եթէ հաշուեմ 7էն 800 քրօնի չափ կ'ելլէ :

Ռեկիմէ . Դէ՛շ ստակ չէ :

Էնկադրանդ . Բաւական է ագչափը , զաւակս , ատով գործ մը սկսելու համար :

Ռեկիմէ . Եւ բնաւ միտքէդ չես անցընել ադ ստակէն ինծի մաս մը տալու համար :

Էնկադրանդ . Բնա՛ւ . Աստուած ալ գիտէ որ ադ մասին չեմ մտածել բնաւ :

Ռեկիմէ . Ողորմելի ձեռք մը հագո՞ւստ ալ չես ուղեր զրկել ինծի :

Էնկադրանդ . Եթէ ինծի հետ քաղաք երթաս , ուղածիդ չափ հագուստ կրնաս ունենալ :

Ռեկիմէ . Բէ՛հ . եթէ ուղէի , ինքնիրենս ալ կրնայի ընել այդ բանը :

Էնկադրանդ . Ո՛չ . հօր մը առաջնոր-

դող ձեռքին տակ շատ աւելի աղէկ է , Ռէկիմէ : Այսօր կրնամ ես նաւահանգիստի նեղ փողոցին մէջ սիրուն պղտիկ տուն մը ունենալ , ատոր համար մեծագումար կանխիկ դրամի պէտք չկայ . եւ ասիկա , գիտե՛ս , նաւորդներու համար սանկ տեսակ մը ընտանեկան հարկ կ'ըլլար :

Ռեկիմէ . Բայց ես չեմ ուղեր քու տունդ գալ : Քեզի հետ առնելիք , տալիք մը չունիմ , գործիդ գնա՛ :

Էնկադրանդ . Խաչ որ դուն երկար ատեն տունս չպիտի մնայիր , զաւակս , անանկ ուղածիս պէս բնաւ չպիտի ըլլար . որովհետեւ դուն այնպէս պիտես լաւ վարուիլ , եւ այս վերջին տարուան մէջ անչափ գեղեցկացած ես . . .

Ռեկիմէ . Յետո՞յ . . .

Էնկադրանդ . Ան ատեն ղեկավար մը թերեւս նոյն իսկ նաւապետ մը կուգար . . .

Ռեկիմէ . Ադ տեսակ մարդու հետ չեմ ամուսնանար ես . նաւորդները savoir vivre չունին :

Էնկադրանդ , Ի՞նչ չունին :

Ռեկիմէ . Կ'ըսեմ որ նաւորդները աղէկ կը ճանչնամ . ամուսնանալիք մարդիկ չեն աւոտնք :

Էնկադրանդ . Ուրեմն ձգէ՛ ամուսնանալը : Ուրիշ կերպով ալ կարելի է գործ տեսնել : (Գաղափէ) Անիկա . . . սա անդլիւացին . . . ան հաճոյքի եաքրովը . . . 300 թալէր տրուաւ , եւ մայրդ քեհէ աւելի գեղեցիկ չէր :

Ռեկիմէ . (Դէ՛շ Կաթիլ) Դո՛ւրս կորսուէ :

Էնկադրանդ (Երբ Կ'եբէայ) . Ի՞նչ , ծեծե՞ս պիտի ինծի :

Ռեկիմէ . Այո՛ . եթէ մօրս վրայ խօսիս , այն ատեն կը զարնեմ : Դո՛ւրս կորսուէ կ'ըսեմ կոր քեզի . (Դէ՛շ Դէ՛շ պարտէզին դռան չէ) եւ դուն ալ զարնելով մի գոցեր . երիտասարդ պարոն Ալվինկը . . .

Էնկադրանդ . Կը քնանայ , այո՛ , գիտեմ ատիկա . Շատ զարմանալի է թէ ինչպէ՞ս դուն աղչափ սիրտ կը հատցնես երիտասարդ պարոն Ալվինկի համար (Գաթ Դայնով) Հա՛ , կարելի է ան է որ

Ռեկիմէ . Դո՛ւրս ելիր եւ չուտով :

Դո՛ւն խնհեցեր ևս , մարդ Աստուծոյ : Զէ՛ ,
աղ ճամբէն մի՛ երթար . անկից Բաթթօր
Մանասէրը կուգայ : Դո՛ւն խոհանոցի՛ սան-
դուղնեբէն վար կորսուէ :

Էնկադրանդ (դեպի աջ) . Այո՛ , այո՛ , կ'երթամ կոր արդէն , բայց ազ եկող մարդուն հետ խօսէ դուն : Անիկա անանկ մարդ մըն է , որ քեզի կ'ըսէ թէ զաւակ մը իր հօրը ինչ պէտք է ընէ : Դանի որ , զիտե՛ս ա՛ , անգամ մը ես քու հայրդ գտնուեր եմ : Եւ ասիկա , եկեղեցիին տոմարէն կրնամ հաստատել ես . (Երէբբդ դռնէն դուրս կ'ելլա շք Ռէյնէ քացած էր և զոր շորէն Եսէնէն իջ գոցէ) .

Ռեկիդե. (Անապատումով ժը հայելէն յետ
լենայի, Բանինիւնով ժը երեսը կը հոգհարէ,
մղակողէն ծայրը կը շարիէ. ու նորէն ծաղկէն-
բուն հեւ կը սկսի գծագրել.)

Բարսեղ Մանթրու . (Աբուրդուան հագած ,
հոգնուցը յետք . կաշէն է . պոճ ճաճքորդէ պոպոկէ
պայտաւի յը գնչէն կաւած , պոքորդէղն դառաւնէն
շարինէրաւն ալեհալը կը ճարնէ .) **Բարի լոյս :**

Ռեկլինե. (Յանկաքալիէ եկած, որաւի
դէմով ժը իւ դաւանայ) Բարբի լոյս, Պարոն
Բասթոր: Շողեհաւոր եկե՞ր է արդէն:

Բասթոր Մ. Հիմա՝ ԿԿԱ. (Պարտեզին
Ինիսիլը իշ Բոնե) Աս անդադրում անձրուհն ալ
կր կատողենէ մարդր :

Ռեկլիմե (Եփեսոսի Կենտրոն)։ Բայց գիւղա-
ցիկին համար օրհնուած եղանակ մըն է աս ,
պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Այո՛, իրաւունք ունիք ադ
մասին : Քաղաքի մարդիկը այնքան քիչ կը
մտածեն այդ կէտին վրայ . (կ'աղէ վերադիտան
հանել) :

Ռեկիկնե, Կրնա՞մ օգնել ձեզ . . . Աս
նչպէս ալ թրջեր է : Դուքսի սենեակը տա-
նիմ կախեմ : Յետոյ հովանոցը . . . , ան ալ
քանամ որ չորնայ (Վերաբնան և հովանոցը յետեւ,
ալ իշտէ երէրորդ դռանէն դուրս կ'ելլէ . Բաս-
կը Մանքըս պայտասովը զինէն վար կ'առնէ և
հեռակէն հեղ աշտակէ մը վրայ լը դնէ . Ռեկիկնե
կը յընէ նորէն) :

Բաւարոյ Մ. Օ'խ , աղէկ է հոս . ամէն
լա՛ւ վիճակի մէջ է տեսնենք :

Ռեկիբնե . Այո՛ , շնորհակալ եմ :

Բաւարոյ Մ. Բայց վաղը շատ գործ կայ,

Ռեկիհե . Այո՛, չաա գործ ունի՜ք :

Բաւթոր Մ. Եւ յուսանք որ Տիկին Ալ-
վինկն ալ տունն է :

Ռեկիրեն . Անշուշտ , անշուշտ : Այս
վայրկեանիս վերն է , եւ երկաթաորդ պարո .
նին չաքոյաթր կը տանի :

Բասթոր Մ. Այո՛, աղէկ ըսիք. վարը
հաւամատոյցին լրայ լսեցի որ Օսլալտը տուն
եկեր է. իրա՞ն է :

Ռեկիրեն . Այո՛ , երէկ չէ առջի օրն էր ,
եկաւ : Մենք իրեն այսօրուան համար կը
սպասէինք :

Բասթոր Մ. Եւ յուսանք որ թարմ ու
առողջ է :

Ռեկիմե . Հապա՛ . շնորհակալ եմ ձեր
հարցումին համար : Միայն ճամբարդութենէն
չատ յոգնած է . որովհետեւ առանց դադարի
Բարիլէն ուղղակի հոս եկած է : Կարծեմ ,
ամբողջ ճամբարդութեան միջոցին երկաթու-
ղիին վակոնը անգամ չէ փոխած : Հիմա կը
քնանայ , անոր համար քիչ մը կամաց սէսք
է խօսինք :

Բաւարոր Մ. Շատ աղէկ , կամա'ց կամաց :

Ռեկիլինե . (Բապտիստինը յանձնարեալն ի իւր ինքն) . Պարոն Բասթոր , չէ՞ք ուզեր քիչ մը նստիլ եւ հանգստանալ . (Բասթորը չի նստիլ) . Ռեկիլինե որդին դառնալով յանձնարեալին . Այսպէս աղէ՞կ է , պարոն Բասթոր :

ԲԱՍՏՐՈՐ Մ. Ծնորդակալ եմ. շնորհա-
կալ եմ. շատ հանգիստ եմ. (Ռէֆլէքէն ին-
չույն). Գրաէք, աղջիկս Էնկադրանդ, զձեզ
վերջին անգամ տեսնելէս ի վեր մեծցած էք:

Ռեկիհե . Իրա՞ւ , պարոն Բասթոր .
տարգելի տիկինը կ'ըսէ որ գիրգած այ եմ :

Բասորո Մ. Կիրցած . թերեւս քիչ մը
 . . . պէտք կ'զարկն չափ . (Կա՛նճ քաղաք իջ) .

Ռեկիդնե . Կուզէ՞ք որ արկին Ալվինկը
կանստմ :

Բասթոր Մ. Շնորհակալ եմ. աճապարեւոտ բան մը չկիայ, սիրելի զաւակս . . .
Ըսէք տեսնեմ բարի աղջիկս, հայրդ ի՞նչ կ'ընէ աս տեղը :

Ռեկիդե . Շատ շնորհակալ եմ , պարոն
Բասթոր , ինքը բաւական աղէկ է :

Բասթոր Մ. Վերջին անգամ քաղաքը
հղած ատենն զիս այցելեց :

Ռեկիմէ . Իրա՛ւ . այնքան կ'ուրախա-
նայ երբ կարող է ձեզ հետ խօսիլ :

Բասքոր Մ . Եւ զուք հիմա հարկաւ
յաճախ իրեն կ'երթաք :

Ռեկիմէ . Ե՛ս . . . Այո՛ , անշուշտ ,
եթէ միայն ժամանակ ունենամ . . . :

Բասքոր Մ . Քու հայրդ զօրաւոր մէկը
չէ . աղջիկս էնկողմանդ , Այնքան պէտք ու-
նի առաջնորդող ձեռքի մը :

Ռեկիմէ . Այո՛ , իրաւունք ունիք :

Բասքոր Մ . Պէտք է որ իր սիրած մէ-
կը իր շուրջը ըլլայ միշտ , որուն դատողու-
թեան կրնայ կարեւորութիւն տալ , ինքն ալ
խոստովանեցաւ այս՝ կատարեալ անկեղծու-
թեամբ , վերջին անգամ ինձ այցելելուն առ-
թիւ :

Ռեկիմէ . Այո՛ , քիչ մը առաջ ինծի ալ
այդ մասին կը խօսէր . բայց չեմ գիտեր որ
տիկին Ալվինկ կրնայ առանց ինծի ըլլալ ,
մանաւանդ հիմա , ուր ամէնքս ալ նոր պա-
տըսպարանին մէջ պէտք է աշխատութիւն
մը ունենանք . Եւ ինծի համար ալ այնքան
դժուար է բամբուլ տիկին Ալվինկէն , որով-
հետեւ այնքան բարեացակամ եղած է միշտ ,
հանդէպ ինծի :

Բասքոր Մ . Բայց զաւկի մը պարտա-
կանութիւնը , իմ բարի աղջիկս . . . բնական
է որ նախ պէտք էր տիրուհիին հաւանու-
թիւնը առնել :

(Շարունակելի)



ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔ

ՏՈՒԹ. ԴԱԼԻԹԵԱՆ



ՈՎԻ լողանքներու ժամա-
նակը մօտեցած է , մանա-
ւանդ Պոլսոյ պէս ծովե-
զերեայ քաղաքի մը մէջ ,
ուր ծով մանելու առիթ-

ները չեն պակսիր : Ուրեմն անօդուտ չէ այս
մասին քանի մը կարեւոր գիտելիքներ հա-
ղորդել Մասիսի ընթերցողներէն հարկաւ ա-
նոնց , որոնք կ'ուզեն կամ արդէն որոշած
են այս տարի ծով մանել :

Ծովի ջուրը տեսակ մը բնական հանքա-
յին ջուր է , chlorurée Sodique կոչուած ջու-
րերուն բուն տիպարը , իր մէջը 30է աւելի
հանքային ու գործարանական մարմիններ կը
պարունակէ , որոնցմէ սակայն երեք չորրորդը
աղէ կը բաղկանայ . ծովի ջուրին պարունա-
կած աղերուն քանակը երկրիս լայնութեան
աստիճաններուն համեմատութեամբ կը տար-
բերի եւ որչափ դէպի հիւսիս երթանք , այն-
չափ ծովի ջուրին աղը կը պակսի , ինչպէս
կը տեսնուի հետեւեալ ցուցակէն :

| | | |
|--------------------|------|----------------|
| Կարմիր ծով | 42 | մաս աղ հաղարին |
| Միջերկրական ծով | 40 | » » » |
| Ատլանտեան ովկէանոս | 38 | » » » |
| Մանչի ծովը | 36 | » » » |
| Հիւսիսային ծով | 33 | » » » |
| Պալթիկ (արեւելեան) | 4,33 | » » » |

ինչպէս նաեւ ծովեզերքներու երկայնքը , գե-
տերու ծովը թափած տեղերը աղի քանակը
կը պակսի գետին խոշորութեանը չափով :

Ծովի ջուրը Sulfate de magnésie ալ կը
պարունակէ , ինչպէս նաեւ ճարպային մար-
մին մը , որուն պատճառով է որ ծով մանող-
ներուն մօրթը իւղոտ ու փակչտուն վիճակ
մը կը ստանայ :

Ծովի ջուրին բարեխառնութեան միջին

աստիճանը , ամառուան ժամանակ , այսինքն լուսին 15 էն մինչեւ սեպտեմբեր , որ լուսանքի ամէնէն յարմար ամիսներն են , ծովէ ծով կը զանազանի . օրինակի համար :

| | | |
|--------------------|------------------------------------|---------|
| Միջերկրական ծով | 22 ⁰ էն 27 ⁰ | աստիճան |
| Արեւմտեան ովկէանոս | 20 ⁰ էն 23 ⁰ | » |
| Հիւսիսային ծով | 16 ⁰ էն 18 ⁰ | » |
| Պալմիր ծով | 15 ⁰ էն 17 ⁰ | » |

հետեւաբար Պոսփորի ջուրը որ մօտաւորապէս Միջերկրականի բարեխառնութիւնը ունի , եւ տեղ տեղ ալ աւելի տաք է , ծովի լուսանքի յարմար ամէն պայմանները ունի :

Ծովային դարմանումը յաջող կերպով կատարուելու երեք գլխաւոր միջոցներ կան .

1. լողանքը , 2. ծովային կլիման եւ 3. աւազի մէջ պառկիլը , այսինքն տեսակ մը աւազի պանեօ :

Լողանքը քանի մը եղանակաւ կարելի է դործարել . ամէնէն պարզը անշուշտ յարմարագոյն տեղ մը ծով մտնելն է , բայց նիհար ու տկարակազմերու համար աւելի օգտակար է ծովի ջուրը տաքցնելով պանեօի մէջ լեցնել ու հոն ընել լողանքը , նաեւ ծովի ջուրը պող կամ տաք վիճակի մէջ տուչի ձեւով կարելի է դործածել մասնաւոր պարագաներու համար :

Հիւանդները պարտին առնուազն ճաշէն 3 ժամ վերջը ծով մտնել . պէտք է անմիջապէս մէջը ցատքեն ու սկսին ձեռքի եւ ոտքի շարժումներ կատարել , Յանկարծ ծովը նետուողները սովորաբար թեթեւ սարսուռ մը կը զգան որ անմիջապէս կ'անցնի , բայց պէտք չէ սպասել որ երկրորդ սարսուռ մըն ալ գայ , երբ այս երկրորդ մտիլը շուտով գայ , կը նշանակէ թէ ծովի բաղնիքը իրենց կազմին չի դար , ուստի շատ շուտ ելլելու է ծովէն : Սարսուռ զգալը կարելի է սակայն վարժուածութեամբ անհետացնել : Ամէն պարագայի մէջ 5-10 վայրկեանէն աւելի կենալը աւելորդ է , եւ օգտակար է որ շուտով հագուելով , ծովեզերքին վրայ արագ արագ պտոյտ մը եւ կամ մարմնամարզ ընէ ծովի լողանք կատարողը :

Ումանք ծով մտնելէ վերջ գլխու ցաւ մը կ'ունենան , ատոր առաջըր առնելու համար , ծովէն ելլալէն վերջ ոտքը տաք ջուրին մէջ դնելու է քանի մը վայրկեան :

Օրը միայն մէկ լողանք առնելու է , եւ 15-20 անգամ ծով մտնելէ վերջ քանի մը օր ընդմիջելով , նորէն նոյնչափ մըն ալ առնել բաւական է . եւ արդէն եղանակին մէջ 40-50 լողանքը ամէն կերպով դոհացուցիչ արդիւնք մը կրնայ տալ :

Աւազի լողանքը տաք ծովեզերքներու մէջ միայն կրնայ դործարուիլ ու մանկանց յատուկ է ընդհանրապէս : Երբ արեգակը լաւ մը տաքցնէ աւազը , փոս մը պէտք է փորել եւ տղան մէջը պառկեցնել 20 վայրկեան , կէս ժամու չափ հոն ձգել : Նաեւ անհրաժեշտ է արեւարդելով մը տղան պաշտպանել արեգական ճառագայթներէն :

Chlorurée Sodique կոչուած ջուրերը , ըլլայ ծովի եւ կամ հանքային , խոյլ (Scrofule) ու տեղական ծիրախտ (Tuberculose locale) կոչուած հիւանդութիւններու համար օգտակար են . ինչպէս նաեւ կը դործածուին մարսողական ու ծննդամիղական ախտերու ապաքինման իրրեւ դեղ :

Բայց ամէնէն աւելի , աւշային կաղմ ունեցող ու ժառանգական եւ կամ անհատական տրամադրութեամբ խոյլի հակամէտ տղայոց կը յարմարի ծովային դարմանը :

Տկար ու վոխտ կազմի ենթակայ եւ ամբողջ մարմնոյն զանազան կողմերուն , մասնաւորապէս վիզին վրայ ուռեր (glande, պեզ) ունեցող ու ոսկորի ծիրախտով վարակուած տղայոց համար , ներքին տեղերէ աւելի , ծովային դարմանն է որ լաւ արդիւնքներ արտադրած է : Ծովեզերքներու վրայ , լողանքներէն դատ , ծովին թարմ ու մաքուր օդն ալ անշուշտ մեծ դեր մը կը խաղայ այս կարգի դարմանումի մը մէջ , պայմանաւ որ հիւանդները շարունակ ու երկար ատեն ապրին այդ տեղերը :

Եւրոպայի հարաւային ծովեզերքներուն երկայնքը , այս վերջին տարիները շատ մը այս կարգի հիւանդանոցներ կառուցուած են , ուր հիւանդ տղաքները ամառ ձմեռ , ամիսներով եւ երեւմտ տարիներով կը մնան , մինչեւ որ բոլորովին ապաքինին : Եւրոպայի մէջ , հետզհետէ ներմուծուած բարենորոգմանց շնորհիւ , ծովեզերեայ դարմանումը այնպիսի հիանալի արդիւնքներ կուտայ այսօր , որ

այլեւս հիւանդ տղաքները փոխանակ քաղաքի հիւանդանոցները պահելու, անմիջապէս ծովեզերեայ դարմանատունները կը խրկեն: Ոսկորէ յառաջացած ծիւրախտաւորներ, որոնք անխուսափելի կերպով պիտի մեռնէին քաղաքին մէջ, այս միջոցներովը կը քրցած են առողջանալ:

Բայց ուշադրութիւն ընկու է որ հիւանդը տեղի չունենայ, հիւանդութիւնը քրօնիք վիճակի մէջ ըլլալու է, որպէս զի ծովեզերքը բնակութիւն հաստատելը օգտակար ըլլայ, ապա թէ ոչ բոլորովին հակառակ արդիւնք մը յառաջ կուգայ:

Մովի լողանքն ու օդը կազդուրիչ հանգամանք մը ունին, հետեւաբար անոնց համար որոնք առանց մասնաւոր հիւանդութիւն մը ունենալու, տկար են, կրնան մեծապէս օգտուիլ ծովի ջուրէն, բայց ջրային կիներու, թոքախտաւորներու, անարիւնութենէ տառապողներու, ինչպէս նաեւ սրտի հիւանդութիւն ունեցողներու համար ընաւ չի յարմարի ծովին ջուրը:

Աւշային կազմութիւն ունեցող աղջիկներ ու կիներ կան որոնք արգանդի անհանգստութիւն, դաշտանի անկանոնութիւն ու ձերմակ հոսում ունին, անոնց համար ծովի լողանքը շատ օգտակար է, 40-50 պահեօէ վերջ մարսողութիւնը կը կանոնաւորի, ու մարմինը ոյժ կը ստանայ, ինչպէս նաեւ կ'անհետանան արգանդի անհանգստութիւնները, միայն թէ քանի մը տարի շարունակելու է, ապահով ու տեւական արդիւնք մը ձեռք ձգելու համար:

* * *


Դժբաղդաբար Պոլսոյ մէջ ծովային դարմանումի (cure marine) յատուկ հաստատութիւններ չկան, ուր կարելի ըլլայ ամիսի մը չափ կանոնաւոր ինամքներու հետեւիլ, զիտութեան բոլոր պահանջներուն համաձայն ընդհանրապէս ծովեզերեայ գիւղապետացու

թիւնն է որ քիչ շատ գիւրութիւններ կ'ընծայէ ծով մտնելու համար, ան ալ շատ թերի կերպով, որովհետեւ մաքուր ու կանոնաւոր ծովի բաղնիքները կը պահսին:

Պոսֆորի երկու եզերքները, շատ տեղեր աղտոտ է, գեղին լնակիչներուն շատութեանը համեմատութեամբ, եւ թէ հակառակ ուղղութեամբ վազող հոսանքները ջուրին բարեխառնութեան աստիճանը շարունակ կը փոփոխեն, իսկ Ոսկեղջիւրի ու կամուրջի բաղնիքներուն վրայ խօսիլ իսկ չարժէր. միայն Մարմարաի երկու եզերքներն են որ ծովի լողանքին ամէնէն աւելի կը յարմարին: Ֆէնէսէն սկսեալ դէպի Բէնտիք, Դարթալ, իսկ դիմացի եզերքը Մաքրի-գիւղ, Այ-Սիէ-Փանօ եւն. Պոլսոյ յարմարագոյն վայրերն են ծով մտնելու համար. յետոյ կուգայ մօտայի ծովը:

Դալսով կզգիներուն. հոն ալ թէեւ ծովը լաւ է, բայց միեւնոյն թերութիւնը ունի. այսինքն կանոնաւոր ու մաքուր բաղնիքներու պակասը մեծապէս կը դժուարացնէ ծովային դարմանումի խնդիրը, քիչեր իրենց անձնական բաղնիքը ունին, մեծագոյն մասը ստիպուած է կամ հանրային բաղնիքներ մտնել եւ կամ հեռուները երթալով բաց տեղերը առնել իր լողանքը, երկու պարագային մէջ ալ, իտէալ դարմանում մը չէ որ կը կատարուի եւ շատեր իրաւամբ կը դանդախին ու կը ստիպուին հրաժարիլ ծով մտնելու օգտակար դարմանումէն:

Կը մաղթենք որ Պոլսայի ու Եալովի հանքային ջուրերուն հաստատութեանց նման եւ թերեւս քիչ մըն ալ աւելի լաւագոյն՝ ծովային դարմանումի յատուկ կայանքներ (station) յիշուին Մարմարաի յարմարագոյն վայրեր, ուր ալ միայն Պոլսոյ ժողովուրդը, այլ շատ քչաքանակութեամբ ալ սիրով պիտի գային իրենց յոգնած մարմնոյն ուժն



ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ , ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ , որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին մէյ մէկ օրինակ ուղարկել Խմբագրութեան , թերթի տնօրէնին հասցէով : Խմբագրութեան ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին , եւ անոնցմէ շահեկան բովանդակութիւն ունեցողներուն տարրալուծումը պիտի ներկայացուի ընթերցողներուն :

«ՄԱՍԻՍ» ԿԻՍՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

| | | |
|-----------|-----------------|--------|
| Տարեկան | 24 թիւ (768 էջ) | 44 դր. |
| Վեցամսեայ | 12 » (384 էջ) | 22 » |
| Եռամսեայ | 6 » (192 էջ) | 11 » |

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|-----------|-----------------|--------|
| Տարեկան | 24 թիւ (768 էջ) | 54 դր. |
| Վեցամսեայ | 12 » (384 էջ) | 27 » |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

| | | |
|-----------|-----------------|----------|
| Տարեկան | 24 թիւ (768 էջ) | 12 ժրանի |
| Վեցամսեայ | 12 » (384 էջ) | 6 » |

«ՄԱՍԻՍ» ԶԵՌԻՔԻ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐԾ.

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել թերթի տնօրէն-խմբագրին

ՄԻՔԱՅԷԼ ԵԱՄՏԱՆՉԵԱՆ

Սթամպոլ , Պալպըլ Հատւղ , Յ. Մատթէոսեան Տպարան
 Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Թերթի տնօրէնը անձամբ կարելի է տեսնել ամէն օր ժամը 6—9 , Մատթէոսեան տպարանը :

Կ'ընդունուին ամէն տեսակ ծանուցումներ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ

ԿԱԶՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ձախահասներու համար

ԴԻՅՑ ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

Գ/ն 6 ՂՐԶ

ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է

Ամէնէն աւելի այսօր ընդունուած է այն ճշմարտութիւնը թէ ժամանակը դրամ է, ներկային մէջ պէտք է արագ երթալ, արագ ապրիլ, արագ վայելել, շուտով հարստանալ եւ մանաւանդ արագ սովորիլ։ Այս վերջին պարագային վրայ է որ մասնաւորապէս կ'ուզեմ ծանրանալ, յայտնելով որ անձ մը պատրաստ է, վեց ամսուան մէջ հիմնական կերպով սովորեցնել Անգլիերէն եւ Գերմաներէն, շնորհիւ նորագոյն գիտական դրութեանց։ Մեր դարավերջիկ կեանքին մէջ ամէնէն կարեւոր կէտն է ուսանիլ բան մը, անոր կարելի եղածին չափ քիչ ժամանակ յատկացնելով, ատու մեր ուրիշ մէկ գործին արգելք չըլլալու համար։

Մանրամասնութեանց համար զիմեցէք Մասիսի Խմբագրատունը։

Նամակով զիմողներէ կը խնդրուի որպէս զի պահարանին երեսի վերի անկիւնը «դասի հարստ» գրեն։

ԱՄԱՌՈՒԱՆ ԸՄՊԵԼԻ



Ամառուան տաք օրերուն, զովանալու համար Տաճկաստանի մէջ ընդհանրապէս պաղ ջուր չ'ուտել կը խմեն, բան մը որ զիրենք աւելի կը ապքցնէ, քան որ անհրաժեշտական զովութիւն մը միայն տալով։ Տեւական զովութիւնն ուղղորդներուն կը յանձնարարենք գաւաթ մը թէյ, որուն պաղն ալ (thé glacé) կ'ըլլայ ամառուան համար։ Անոնք որոնք կ'ուզեն փորձել թէյին զովացնող յատկութիւնը, թող դիմեն Կ. ԵՍՎՐՈՒՆ ԵՍՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ թէյի վաճառատունը որ իր զանազան խառնուրդներովը և գինի աժանութեամբ կը մրցի Տաճկաստանի մէջ գտնուած բոլոր միւս վաճառատուններուն հետ։

Ուշագրութիւն վաճառատան մարքային։

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս ձեկալ պէյ խանին օակ, քիւ 10